

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ. ԸՆԴԴԵՍ
ԿԵՂԾԻՔԻ ԵՎ ՈՏՆՁԳՈՒԹՅԱՆ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА:
ПРОТИВ ФАЛЬСИФИКАЦИИ И
ПОСЯГАТЕЛЬСТВА**

**HISTORY AND CULTURE: AGAINST
FALSIFICATION AND INFRINGEMENT**

ԲՈՎԱՆՐԱԿՈՒԹՅՈՒՆ

«Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության»
 հանրապետական գիտաժողովը նախաձեռնել է «Կաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդը՝
 «Կաշտպանության նախարարության կազմակերպչական աջակցությամբ:

Բարկեն Հարությունյան
 Այսպես կոչված Աղվանքի էթնիկ պատմության մի քանի հարցեր..... 9

Աշոտ Մելքոնյան
 Պատմության կեղծարարության թուրք-ադրբեջանական պատմագրության
 մեթոդաբանական հիմքը 12

Ալբերտ Խառատյան
 Թուրքական պատմաբանների քարոզչական կեղծիքները
 (1860-1923թթ. ժամանակաշրջան) 14

Արթուր Աթանեսյան
 Հայաստանյան պատմության ադրբեջանական
 արդի կեղծարարությունների հարցի շուրջ..... 15

Միեր Կարապետյան
 Պատմության թուրքական կեղծարարության
 մերկացումը հայ պատմագրության մեջ..... 17

Հասմիկ Ստեփանյան,
 Հայագիտական թեմաների արծարծումը թուրքական
 հանրագիտարանային գրականության մեջ 18

Հրաչիկ Միրզոյան
 Մշակութակողոպուտի ադրբեջանական մի տեսություն 19

Դավիթ Քերթմենջյան
 Հայկական ճարտարապետությունը ճշմարտության և
 կեղծարարության միջև..... 21

Գևորգ Ստեփանյան
 Արևելյան Այսրկովկասի ժողովրդագրության խեղաթյուրումը
 ադրբեջանական պատմագրության մեջ 23

Էդիկ Մինասյան
 Սունգայիթի և Բաքվի ջարդերի
 ադրբեջանական կեղծարարությունը..... 24

Լևոն Շիրինյան
 Բաքվի էպոպեան /1918թ./՝ որպես հայ գինականի փառքի հուշաքար..... 27

Պարիկ Քեռյան
 Ադրբեջանի դերի գերազնահատումը տարածաշրջանային քաղաքական
 գործընթացներում..... 28

Համլետ Պետրոսյան
 Հուշարձանները հայ-ադրբեջանական հակամարտության գոտում.
 Արցախի Տիգրանակերտ. քարոզչություն և հակաքարոզչություն 31

Էրվարդ Ղանիեյան

Արցախյան հաղթանակի գաղափարական նշանակությունը տեղեկատվական պատերազմում՝ ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության.....32

Ալեքսանդր Իսկանդարյան

Քաղաքականություն, պատմություն, հիշողություն. համատեքստ և ռազմավարություն..... 34

Արզամ Այվազյան

Հայաստանի պատմության և մշակույթի փաստերի աղավաղումները 2008 -2010 թթ. հայաստանյան մի քանի գիտահանրամատչելի հրատարակություններում և տեղեկատվական աղբյուրներում.....36

Հակոբ Միմոնյան

Հայաստանի բրոնզի դարի պատմությունն ու մշակույթն իրենց վերագրելու մեր հարևանների նկրտումների շուրջ..... 37

Սամվել Կարապետյան

Հայկական պատմական հուշարձանների վիճակն Արևմտյան Հայաստանում38

Վլադիմիր Վարդանյան

Իրավական քարոզչությունը և հակաքարոզչությունը դարաբաղյան հակամարտության համատեքստում. հաջողություններ և ծախսողումներ.....40

Վիգեն Քոչարյան

Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի պաշտպանությունը միջազգային իրավունքի հիմունքներում..... 42

Ալեքսանդր Սաֆարյան

Թուրքական և ադրբեջանական ԶԼՄ-ներում հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերություններն արտացոլող տեղեկատվության մշտազննման արդյունքների շուրջ43

Միեր Հովհաննիսյան

Հայագիտության արդի մարտահրավերները համացանցում44

Ալիկ Ղարիբյան

Ադրբեջանական քարոզչության կեղծ «պատմական» հիմքերը.....46

Աշոտ Աջամօղլյան,

Կեղծիքի և ոտնձգության դրսևորումները աշխարհագրական տեղանունների և պատմա-մշակութային հուշարձանների անվանափոխման միջոցով.....48

Վարդան Ռսկանյան

Արևելյան Այսրկովկասի բնիկ ժողովուրդների դեմ ուղղված Ադրբեջանի ուժացման քաղաքականությունը.....49

Մխիթար Գաբրիելյան

Ազգագրական նյութերի օգտագործման խնդիրներն արդի տեղեկատվական «պատերազմներում»..... 51

Արմեն Մարուքյան

Հայոց ցեղասպանության ժխտման ու նենգափոխման թուրքական «հայեցակարգի» հիմնական բաղադրիչները 53

Անուշ Հովհաննիսյան

Հայերի ցեղասպանության ուրացման առանձնահատկություններն արդի Թուրքիայում..... 55

Գեղամ Հովհաննիսյան

Հայոց պատմության հիմնահարցերի թուրքական նենգափոխումների մերկացումը 20-րդ դարի սկզբի հնչակյան մամուլում.....57

Արտաշես Շահնազարյան

Հայոց արևելից կողմանց գիտամշակութային գործիչների ազգային պատկանելության ադրբեջանական նենգափոխումը...59

Ռուբեն Սահակյան

1914-1916թթ. հայ կամավորական շարժման և արևմտահայ ինքնապաշտպանական մարտերի պատմության խեղաթյուրումը թուրք և ադրբեջանցի պատմաբանների աշխատություններում.....60

Թամար Հայրապետյան

Մարաղա. 20-րդ դարավերջի Գողգոթա /ականատեսների վկայություններ և հիշողություններ` 1992թ. ապրիլի10/.....62

Արտակ Մաղալյան

Արցախի մելիքությունների պատմության նենգափոխումը ադրբեջանական պատմագրության կողմից64

Կարեն Թոխատյան

Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերների հայկական ժառանգական պատկանելության նենգափոխումը թուրք-ադրբեջանական կեղծարարների կողմից65

Ժակ Մանուկյան

Ադրբեջանի արտաքին քաղաքականության հակահայկական ուղղվածությունը.....66

Վարդան Գրիգորյան,

Ադրբեջանական քարոզչության որոշ միտումների մասին.....67

СОДЕРЖАНИЕ

<i>Бабкен Арутюнян</i> Некоторые вопросы этнической истории так называемой Кавказской Албании	68
<i>Ашот Мелконян</i> Методологическая основа фальсификации истории в турецко- азербайджанской историографии	71
<i>Альберт Харатян</i> Пропагандистские фальсификации турецких историков (период с 1860-го по 1923 гг.).....	73
<i>Артур Атанесян</i> Современные азербайджанские фальсификации армянской истории	75
<i>Мгер Карапетян</i> Разоблачение турецкой фальсификации истории в армянской историографии	77
<i>Асмик Степанян</i> Арменоведческие темы в турецкой энциклопедической литературе	78
<i>Грачик Мирзоян</i> Азербайджанская "теория" грабежа культуры	79
<i>Давид Кертменджян</i> Армянская архитектура между реальностью и фальсификацией	81
<i>Геворк Степанян</i> Фальсификация демографии восточного Закавказья в азербайджанской Историографии	83
<i>Эдик Минасян</i> Азербайджанская фальсификация погромов в Сумгаите и Баку	84
<i>Левон Ширинян</i> Бакинская эпопея /1918г./ как памятник славы армянского воина	87
<i>Гарик Керян</i> Переоценка роли Азербайджана в региональных политических процессах	88
<i>Гамлет Петросян</i> Памятники в зоне армяно-азербайджанского конфликта: Арцахский Тигранакерт: пропаганда и антипропаганда.....	91
<i>Эдуард Даниелян</i> Идеологическое значение арцахской победы в информационной войне против турецко-азербайджанской фальсификации	92

<i>Александр Искандарян</i> Политика, история и память, стратегия и контекст	94
<i>Аргам Айвазян</i> Искажение фактов истории и культуры Армении в некоторых армянских научно- популярных изданиях и информационных источниках опубликованных в 2008-2010 гг.....	96
<i>Акоп Симонян</i> Вокруг домогательств наших соседей и попыток присвоения ими истории и культуры Армении бронзового века	97
<i>Самвел Карапетян</i> Состояние армянских исторических памятников в западной Армении	99
<i>Владимир Варданян</i> Правовая пропаганда и антипропаганда в контексте карабахского конфликта: достижения и неудачи	101
<i>Виген Кочарян</i> Защита права Нагорного Карабаха на самоопределение в основах международного права.....	103
<i>Александр Сафарян</i> О результатах мониторинга информации отражающей армяно-турецкие и армяно азербайджанские отношения в турецких и азербайджанских СМИ	104
<i>Мгер Оганнесян</i> Современные проблемы арменоведения в интернете	105
<i>Алик Гарибян</i> Ложные "исторические" корни азербайджанской пропаганды	107
<i>Ашот Аджамоглян</i> Мошенничества и искажения истории и культуры путем переименования географических названий	109
<i>Вардан Восканян</i> Ассимиляционная политика Азербайджана против коренных народов восточного Закавказья	110
<i>Мхитар Габриелян</i> Проблемы использования этнографических материалов в современных информационных войнах.....	112
<i>Армен Марукян</i> Турецкая "концепция" отрицания и фальсификации геноцида армян	114
<i>Ануш Оганнесян</i> Особенности отрицания геноцида армян в современной Турции	116
<i>Гегам Оганнесян</i> Турецкое искажение основополагающих вопросов армянской истории и их разоблачение в печатных органах гнчакистов в начале XX века	117

Арташес Шахназарян Азербайджанская фальсификация национальной принадлежности деятелей науки и культуры восточных краев Армении	119
Рубен Саакян Фальсификация истории армянского добровольческого движения и боев самообороны западных армян 1914-1916 гг. в трудах турецких и азербайджанских историков	121
Тамар Айрапетян Марага, Голгофа конца 20-го века (Свидетельства и воспоминания очевидцев - 1992 г. 10 апреля).....	123
Артаг Магалян Фальсификация истории меликств Арцаха азербайджанской историографией	124
Карен Тохатян Фальсификация армянской наследственной принадлежности наскальных изображений Армянского Нагорья турецко-азербайджанскими Фальсификаторами	125
Жак Манукян Антиармянская направленность внешней политики Азербайджана	126
Вардан Григорян О некоторых тенденциях азербайджанской пропаганды	127

ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ ԱՂՎԱՆՔԻ ԷԹՆԻԿ ՊԱՏՈՒԹՅԱՆ
ՄԻ ԶԱՆԻ ՀԱՐՑԵՐ

1. Պատմագիտության մեջ արմատացել է այն տեսակետը, թե Այսր-կովկասի արևելյան մասում գոյություն է ունեցել Ալբան կամ Աղվան անունով մի ժողովուրդ, որն իր անունն է տվել Ալբանիա կամ Աղվանք պետությանը: Եվ քանի որ Պատմահայր Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» երկում Աղվանք է կոչվում Ուտիքի և Արցախի տարածքը, որոշ, մասնավորապես, ադրբեջանական պատմաբաններ առաջադրում են այն տեսակետը, թե իբր Ալբանական կամ Աղվանից թագավորությունը սկզբում ներառել է ոչ միայն Կուրի ձախափնյակը, այլև աջափնյակը, և որ Կուրի աջափնյակը հայոց թագավորներից Արտաշես Ա-ն կամ Տիգրան Բ Մեծը նվաճել են ալբաններից:

Պատմահոր երկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Աղվանք անունը ծագում է պարզապես աղ բառի գործիական հոլովից, որը հնչում է աղու: Աղու նշանակել է աղով համեմված, այսինքն՝ անուշ, համեղ և քաղցր, սակայն, ինչպես կտեսնենք ստորև, նաև արգավանդ: Աղու գործիական հոլովածևին նախորդել է ալուվ-ը, որը փոխառել են դեռ մինչև հայ գրերի գյուտը վրացիները՝ ստեղծելով գաալովեբա բառը, որ կնշանակի համեղացնել, անուշացնել: Սակայն ալուվ-ին ավելի վաղ ժամանակներում նախորդել է ալուբ-ը: Փաստորեն, զոնե մ.թ.ա. I դարում հայերը Ալոբանք էին կոչում Կուրի աջափնյակի Ուտիք և Արցախ աշխարհների տարածքը: Այդ նույն ժամանակներում Հայաստանում հայտնված հռոմեական Պոմպեոս զորավարի զինվորների այն հարցին, թե ինչ երկիր է Կուրի ձախափնյակում, քանի որ հայերը Կուրի ձախափնյակը համարում էին Կուրի աջափնյակի արգավանդ դաշտի շարունակությունը, պատասխանել են՝ Ալոբանք, այսինքն՝ Արգավանդ դաշտի երկիրը: Հռոմեացիներն էլ, ազդվելով Շոտլանդիայում գտնվող Ալբանիա և Գալլիայում գտնվող Ալբանիա երկրանուններից և Իտալիայի Ալբանուս Մոնս լեռների անունից, Ալոբանք-ը վերածել են Ալբանիայի: Անվանումն անփոփոխ մնաց հունա-հռոմեական աշխարհում, սակայն հայերենը զարգանում էր, և Ալոբանք-ը սկզբում վերածվեց

Արմանք-ի, իսկ ավելի ուշ՝ Արուանք-ի և Արուանք-ի: Այնպես որ թե՛ Ալբանիան և թե՛ Ադուանքն ունեն գուտ հայկական ծագում և արտահայտում են աշխարհագրական իմաստ՝ Արգավանդ դաշտի երկիր: Պատահական չէ, որ Սասանյան Պարսկաստանը, տիրելով Արևելյան և Կենտրոնական Այսրկովկասին՝ վերածելով այն մարզպանությունների, ծայր արևելյան մարզպանությունը կոչեց Ռանի կամ Առանի մարզպանություն, այսինքն՝ Ղաշտի մարզպանություն, ինչը ծագում էր Ադուանք անունից:

2. Կուրի ծախսափնյակում հունա-հռոմեական աղբյուրներում հանդես եկած Ալբանիա պետությունը ծնունդ է առել մ.թ.ա. II դ. վերջին կամ I դ. սկզբին: Թե ինչպես են անվանել պետությունն այսպես կոչված Ալբանիայի բնակիչները, հայտնի չէ: Համենայն դեպս, երբ ընկավ այսպես կոչված Աղվանից թագավորությունը, չպահպանվեց Ալբան կամ Արուան անունը կրող և ոչ մի ցեղ: Շատ հնարավոր է, որ այն սկզբում կրել է մի ինչ-որ ցեղի անուն, որը մեզ չի հասել: Մ.թ. I դարում ալանական ցեղերի ճնշման ներքո Արևելյան Այսրկովկասը հեղեղվում է Հյուսիսային Կովկասից ներթափանցած կովկասալեզու ցեղերով, որոնք արմատապես փոխում են երկրամասի էթնիկ պատկերը: Այդ ցեղերի մեջ առանձնանում էին գարգարացիները, ուղիները և ուրիշներ: II դարում Արևելյան Այսրկովկասը նվաճում են իրանախոս մասագետական կամ մազքութական ցեղերը, որոնց ճնշման ներքո գարգարացիները, ուղիները և մյուսները քաշվում են դեպի արևմուտք՝ զբաղեցնելով Նուխի կամ Շաքի քաղաքի շրջակա տարածքները: Մազքութներին հաջողվում է նվաճել նաև երկրի արևմտյան հատվածը, որի արդյունքում պետությունը հայերն սկսում են կոչել Մազքթաց թագավորություն կամ ավանդական կարգով՝ Աղվանք:

Երբ պարսիկները տիրեցին Մազքթաց թագավորությանը, նրա կազմից հանեցին արևելյան իրանախոս հատվածը, և թագավորությունը պահպանվեց արևմտյան ու կենտրոնական մասերում: Հավանաբար, այն կոչվել է Գարգարացվոց թագավորություն, քանի որ բոլորովին ոչ պատահականորեն Մեսրոպ Մաշտոցը գիր է ստեղծել գարգարացիների խեցբեկագույն և կոկորդախոս լեզվի համար, չնայած վերջինս մեծ մասամբ աղբյուրներում հանդիպում է աղվանից գիր անունով:

3. Պատմության ընթացքում իրար հետ շփոթվել են ալբան և մասագետ կամ մազքութ էթնանունները, որի արդյունքում առաջացել են

զանազան շփոթներ: II դ. պատմիչ Արիանոսը ալբաններին հիշատակում է մ.թ.ա. 331 թ. Գավազամելայի ձակատամարտում: Սակայն I դարի հեղինակ Կուրտիոս Ռուփոսը բոլորովին տեղեկություն չունի ալբանների մասին և ձակատամարտի մասնակից է համարում մասագետներին: Եզրակացությունը մեկն է՝ Արիանոսը, ազդվելով Ալբանիան մասագետների գրավելու փաստից, նրանց անունը փոխարինել է ալբաններով: Նմանօրինակ թյուրըմբռնում տեսնում ենք նաև III դարի հեղինակ Սուլինոսի մոտ, որի խոսքերով իբրև թե Ալբանիայի թագավորը փղախեղդ երկու շուն է նվիրել Ալեքսանդր Մակեդոնացուն: Իրականում կրկին ալբան և մասագետ շփոթն է:

4. Հույն աշխարհագրագետ Ստրաբոնի խոսքերով՝ ալբանները եղել են տարբեր լեզուներով խոսող 26 ցեղերի պետական կազմավորում: Ուսումնասիրողները փորձել են ճշգրտել այդ ցեղերի անվանումները: Սակայն գարգարացիները և ուղիները, օրինակ, Ստրաբոնի օրերում դեռևս բնակվում էին Հյուսիսային Կովկասում և չէին կարող լինել ալբանական կամ աղվանական ցեղերի միության մեջ, նույնը կարելի է ասել մյուս ցեղերի մասին: Այլ խոսքով՝ սկզբնաղբյուրները բոլորովին տեղեկություններ չեն պահպանել Ստրաբոնի հիշատակած 26 ցեղերի անվանումների մասին: Ղատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ այսպես կոչված Ալբանիայի տարածքում բնակվել են հիմնականում իրանախոս ցեղեր և մասամբ՝ կովկասալեզու ցեղեր: Չի բացառվում, որ այդ շրջանի ցեղերը, որոնց Պատմահայր Մովսես Խորենացին համարում է «եկամուտ» ազգ՝ առանց անուն տալու, եղել են մասագետական կամ մազքութական ցեղերի դեպի Այսրկովկաս ներխուժման առաջին ալիքի ներկայացուցիչները: Ըստ վերոհիշյալի՝ կարելի է ենթադրել, որ այսպես կոչված Ալբանական պետության գոյության առաջին շրջանում այն կոչվել է Մազքթաց թագավորություն: Գարգարացիների, ուղիների և կովկասալեզու մյուս ցեղերի Այսրկովկասում հաստատվելուց հետո պետությունն ստանում է Գարգարացվոց թագավորություն անունը, իսկ մասագետների կամ մազքութների երկրորդ ներխուժումից հետո կրկին Մազքթաց թագավորություն: Պատահական չէ, որ Ազաթանգեղոսը Հյուսիսային կամ Գուգարաց բղեշխին համարում է «բղեշխն ի Մազքթաց կողմանէն», սակայն այդ ամբողջ շրջանում հայերն այն հիմնականում կոչել են Արգավանդ դաշտի երկիր կամ Ադուանք աշխարհագրական անվանումով:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
«Չ ԳԱՆ թղթակից անդամ, «Չ ԳԱՆ ՊԻ»

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂՇԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔ-ԱՂԻՐԵՑԱՆԱԿԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

XX դարի 20-ական թվականներին Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ Մուստաֆա Քեմալի հիմնադրած պաշտոնական թուրքական պատմագրության առջև ի սկզբանե խնդիր դրվեց՝ ամեն զնով «ապացուցելու», որ Փոքր Ասիայում և Արևմտյան Հայաստանում (ըստ թուրքերի՝ «Արևելյան Անատոլիայում») թուրքական էթնոսը բնակվել է վաղնջական ժամանակներից և այդ տարածաշրջանի պատմության ու մշակույթի կրողն է։ Այդ շինծու տեսությանը «գիտական» բովանդակություն հաղորդելու և թուրքական ցեղերի եկվորության մասին հանրահայտ հայեցակարգը վերանայելու նպատակով՝ թուրք պատմաբանները գործի դրեցին ներկայիս Թուրքիայի տարածքում ապրած ժողովուրդների՝ խեթերի, կապպոկիացիների, բուբանիացիների, պերգամցիների, փյունիկացիների, հայերի, ասորիների, հույների և այլոց պատմությունը յուրացնելու մեթոդը։ Կամ իրենց այդ ժողովուրդների ժառանգներ հռչակելու, կամ՝ նրանց գոյությունն այդ տարածաշրջանում առհասարակ ժխտելու եղանակով։

Հատկանշական է, որ նախքան պատմաբանների՝ վերոհիշյալ «հայեցակարգը» գործողության դնելը, քեմալական շարժման առաջին տարիներին թուրք գործիչներն արդեն շրջանառություն էին հանել հին դարերում թուրքական պետությունների գոյության մասին կեղծիքը։ Պատահական չէ, որ 1921թ. սեպտեմբերի վերջին՝ Կարսի կոնֆերանսի բացման ժամանակ, թուրքական պատվիրակության նախագահ Քյազիմ Կարաբեքիրը ներկաներին «հիշեցրել» էր, որ իրենք թուրքական հողում են, որտեղ իր հայրենակիցները ժամանակին ստեղծել են տարածաշրջանի հնագույն պետություններից մեկը՝ Ուրարտուն։ Թուրքական պատմաշինության ոլորտի մեջ հատուկ տեղ հատկացվեց հայոց պատմությանը, որի հիմքում դարձյալ ժողովրդագրական և այլ խնդիրների նենգափոխումն էր։ Թուրք պատմաբան Էսաթ Ուրասը, կեղծելով պատմությունը, պնդում էր, որ պատմական ոչ մի ժամանակաշրջանում հայ էթնոսը տարածաշրջանում մեծամասնություն չի կազմել և

Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ ցեղասպանություն չի գործվել։

Վերջին տասնամյակներին, պայմանավորված միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հաղթարշավի անընդհատ խորացմամբ, թուրք կեղծարարները նույնիսկ հորինեցին մի տեսություն, ըստ որի՝ հայերն են իրականացրել ցեղասպանություն թուրքերի նկատմամբ։ Այս «հայեցակարգի» ամենախոշոր ներկայացուցիչներից մեկը դարձավ մինչև վերջերս «Թուրքական պատմագիտական ընկերության» նախագահի պաշտոնն զբաղեցրած Յուսուֆ Հալաջօղլուն։

Յուրացնելով իրենց թուրք գրչակիցների կիրառած վերոհիշյալ հնարքները՝ դեռ խորհրդային տարիներին ադրբեջանցիները Զիա Քունյաթովի գլխավորությամբ համանման մոդել ստեղծեցին Այսրկովկասի պատմության համար։ Հին փոքրասիական ժողովուրդների փոխարեն՝ տվյալ դեպքում ադրբեջանցիների նախնիներ հռչակվեցին Կուրի ձախակողմում՝ մինչև Մեծ Կովկասի լեռնաշղթայի հատվածում ապրած աղվանները, ընդ որում՝ միջնադարում վերջիններիս պատմության թատերաբեմից հեռանալը հայտարարվեց հայերի «ազգաձուլման» ազգայնամուլ քաղաքականության հետևանք։ Հետզհետե յուրացվեց Արաքսից հարավ ձգվող, ներկայիս Ադրբեջանի հետ որևէ կապ չունեցող իրանական Ատրպատական երկրամասի անունը։ Շուտով «ադրբեջանական» հռչակվեցին նաև Հայոց Ուտիք, Արցախ, Սյունիք աշխարհները, Արևելյան Անդրկովկասի ժողովուրդների՝ լեզգիների, թալիշների, ավարների, թաթերի, քրդերի, պարսիկների և այլոց մշակութային ժառանգության կոթողները։ Անկախության հռչակումից հետո՝ ալիևյան իշխանության անմիջական ուղղորդմամբ, ադրբեջանական պատմագրությունը հայտնվեց ամեն մի գիտական վերահսկողությունից դուրս և իր անսահման երևակայությամբ գերազանցեց անգամ թուրքական պատմագրությանը։

«Ադրբեջանական» հռչակվեցին Այսրկովկասում և նրան հարող երկրամասերում եղած բոլոր իրանական, հայկական և այլ պետական կազմավորումները, դրանց տարածքում ապրած ժողովուրդների պատմությունն ու մշակույթը։

**ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԶԱՐՈՋՉԱԿԱՆ ԿԵԴՇԻՔՆԵՐԸ
(1860-1923ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆ)**

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐԻՔԵԶԱՆԱԿԱՆ ԱՐԴԻ
ԿԵԴՄԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐ**

Սկսած անցյալ դարի 30-ականներից թուրք պատմաբանները լծվել են հայոց պատմության հիմնահարցերը կեղծելու գործին: Թուրքական պատմական ընկերության անդամների մի քանի սերունդ (Մեհմեդ Քյուփրուլու, Թայիփ Գյոքբիլգիլ, Շինասի Ալթընդաղ, Յուսուֆ Բայուր, Էնվեր Կարալ, Էսաթ Ուրաս, Սադի Քոչաշ, Բիլալ Շիմշիր և այլք) երկար տասնամյակներ ի վեր պատմության նենգափոխման արդյունքում առաջադրում են հետևյալը.

1. Արևմտահայերն ազգային-ազատագրական պայքար երբևէ չեն մղել, իսկ պատահած հուզումները հրահրել են արտաքին ուժերը,

2. Օսմանները հայերի հանդեպ ունեցել են «հայրախնամ» վերաբերմունք, և հատկապես թանգիմաթի շրջանում (1839-1856 թթ.) հայերին վստահվել են պետական բարձր պաշտոններ,

3. Օսմանյան Թուրքիայում այնքան բարձր էին գնահատում հայերին, որ սուլթան Աբդուլ Ազիզը նրանց նույնիսկ շնորհել է սահմանադրություն (1860թ., 1863թ.), որից զուրկ էր անգամ թուրք տարրը,

4. Իրականում չեն եղել 1894-1896 թթ., ինչպես և Աղանայի (1909թ.) կոտորածները, եղել են սոսկ ընդհարումներ հայերի և մահմեդականների միջև, որոնք երկուստեք հավասարաչափ կորուստներ են ունեցել:

Նկատենք, որ այդ հավասարաչափ կորուստների մասին կեղծիքը շրջանառության է դրվել 1918 թ., երբ Կ. Պոլսում սկսվել էր երիտթուրքերի դատավարությունը. նրանց փաստաբաններն ու թուրքական մամուլը որպես փաստարկ օգտագործում էին նշված կեղծիքը:

Այդ նույն հերյուրանքը շրջանառվում է նաև մեր օրերում, երբ դրան են դիմում թուրք պատմաբանները և պետական գործիչները՝ հայերի ցեղասպանությունը հերքելու նպատակով:

Պետք է նշել, որ թուրքական պաշտոնական պատմագրության հորինած կեղծիքները, սկսած 1990-ական թթ., լուրջ ձեղքեր են տալիս, քանի որ հայտնվել են նաև թուրք պատմաբաններ, որոնք հաստատում են ցեղասպանության փաստը (Թաներ Աքչամ, Օրհան Փամուկ):

Ադրբեջանի Հանրապետությունը կեղծարարությունների ռազմավարության կիրառմամբ հետամտում է ինչպես դարաբաղյան հակամարտությանն առնչվող, այնպես էլ ազգային և պետական ինքնության ձևավորման ու ամրապնդման նպատակներ:

Ադրբեջանի Հանրապետության կողմից պատմական փաստեր կեղծելու, նոր պատմական իրողությունները կառուցակցելու և միջազգային հանրությանը դրանք մատուցելու գործընթացներն իրականացնում են տարբեր գործիչներ՝ ինչպես պետական, այնպես էլ հասարակական կազմակերպությունների և անհատների մակարդակով, սակայն դրանք կառավարում և ուղղորդում է պետական իշխանությունը՝ ի դեմս նախագահական ընտանիքի և Հեյդար Ալիևի հիմնադրամի: Պատմական փաստերի կեղծման և նոր պատմամշակութային իրողությունների կառուցման ռազմավարական նպատակների իրականացումն Ադրբեջանում և դրանից դուրս բաշխված է ինչպես քաղաքական սուբյեկտների՝ Նախագահի, իր ընտանիքի անդամների, արտաքին գործերի նախարարության և Ադրբեջանի Հանրապետության դեսպանությունների և հյուպատոսությունների, այնպես էլ Ադրբեջանում գործող գիտական կենտրոնների, հասարակական կազմակերպությունների, հիմնականում ԱՊՀ պետությունների բազմաթիվ քաղաքներում գործող և մշտապես բացվող նոր տարաբնույթ ադրբեջանական «մշակութային կենտրոնների», ադրբեջանական համայնքների և տնտեսական էլիտայի միջև:

Պատմական փաստերի կեղծման, համաշխարհային պատմության մեջ Ադրբեջանի դերի ուռճացման և առասպելականացման, Ադրբեջանի կողմից Հայաստանի պատմության խեղաթյուրման գործընթացներն ընդգրկում են Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական պատերազմի դաշտը, մասնավորապես, ուղղված լինելով Հայաստանի և Արցախի տեղեկատվական և առհասարակ ազգային անվտանգության դեմ: Սակայն, պետք է նշել, որ պատմության կեղծման և խեղա-

թյուրման աղբբեջանական քաղաքականությունն ավելի լայն է, քան Աղբբեջանի տեղեկատվական պատերազմը դարաբաղյան հակամարտության համակարգում. աղբբեջանական պատմամշակութային կեղծարարությունները միտված են հետևյալ հիմնական նպատակներին.

1. Ներկայացնել Աղբբեջանի պատմությունը ժամանակագրական շատ ավելի մեծ տիրույթում, քան այն իրականում կա՝ դրանով իսկ հիմնավորելով Աղբբեջանի պետականության “հին” լինելու նորաստեղծ առասպելը:

2. Ներկայացնելով Աղբբեջանի “հին” լինելը՝ ի ցույց դնել աղբբեջանցիների՝ Կովկասում տեղացի, բնիկ լինելու հանգամանքը:

3. Ներկայացնելով տարածաշրջանում աղբբեջանցիների բնիկ լինելու առասպելը՝ իբրև փաստ, հիմնավորել տարածքների պատկանելությունն արդի Աղբբեջանի Հանրապետությանը, ներառյալ Հայաստանի և Արցախի տարածքները:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի և Արցախի անվտանգության դեմ ուղղված Աղբբեջանի տեղեկատվական պատերազմը Բաքվի միակ նպատակը չէ: Աղբբեջանում և դրանից դուրս քաղաքական գործիչների, գիտնականների, մշակութային գործիչների, լրագրողների և այլոց օգտագործմամբ հիմնավորվում է Աղբբեջանի և աղբբեջանցիների պետական և ազգային ինքնության նոր կերպարը: Նավթային եկամուտների մի մասն Աղբբեջանի իշխանությունները նպատակաուղղվում են պետության նոր իմիջի, կերպարի ձևավորմանն ու դրա ամրագրմանը հին և նոր պատմագիտական ու քաղաքագիտական աղբբյուրներում, ինչպես նաև ամենօրյա տեղեկատվական հոսքերում: Աղբբեջանից վարձատրվող աղբբեջանցի և օտարերկրացի մասնագետները գրում են Աղբբեջանի նորագույն պատմությունը՝ իրենց օգտին ծառայեցնելով և մեկնաբանելով ինչպես գոյություն ունեցող փաստերը, այնպես էլ հորինելով և կառուցակցելով նոր իրողություններ, որոնք մասնագիտական տեղեկատվական աջակցության շնորհիվ որոշակի ժամանակահատվածում պատմական փաստի կարգավիճակ են ստանում:

Այդ մասին մանրամասն տե՛ս՝ Ա. Ժամակոչյան, Ա. Աթանեսյան, Գ. Հարությունյան, և այլք., Աղբբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը (Գ. Հարությունյանի խմբ.): Ե., «Կառավարության ամբիթեր “Նորավանք” գիտակրթական հիմնադրամ, 2009:

Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր, ՀՊՄՀ
Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԵԴՇԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՐԿԱՑՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայոց պատմության տարբեր ժամանակաշրջանների թուրքական նենգափոխումը սկզբնավորվել է պանթուրքիզմի հետադիմական գաղափարախոսության ձևավորմանը զուգընթաց:

Չնայած գաղափարական արգելքներին՝ խորհրդահայ պատմաբաններին հաջողվեց զգալի աշխատանք կատարել պատմության թուրք կեղծարարներին հակահարված տալու գործում: Այդ խնդրին առաջիններից մեկը դեռևս 1955-ին անդրադարձավ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը:

Թուրքական կեղծարարության մերկացման առումով նշանակալի էր Երվանդ Սարգսյանի և Ռուբեն Սահակյանի աշխատությունների հրապարակումը:

Հայաստանի հին և միջին դարերի պատմության թուրքական նենգափոխումներին արժանի հակահարված հասցնելու գործում ծանրակշիռ ավանդ ունի ակադեմիկոս Մ. Զուլայանը: Նա քննության է առնում թուրք պատմաբաններ Շ. Գյունալթայի, Զ. Տողանի, Է. Ուրասի, Ֆ. Կըրզըօղլուի, Ա. Էնգինի, Ս. Քոչաշի և այլոց գրքերը, որոնք ընդհանուր ոչինչ չունեն գիտության հետ:

Պատմության թուրք և թուրքամետ կեղծարարների մերկացմանը 1998-ին առանձին գիրք է նվիրել ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը:

Ընդհանրացնող նշանակություն ունի սխյուռքահայ նշանավոր պատմաբան Վահագն Դադրյանի 2005թ. հրատարակած հատուկ աշխատությունն ընդդեմ հայոց ցեղասպանության ժխտման թուրքական փաստարկների:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ
ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. **TARİH ve TOPLUM** ամսագիրը Մեծամրուցում հրատարակվող հանրագիտարանային ամսագիր է, որը մեծ ժողովրդականություն է վայելում: Այն պատմաբանասիրական, մշակութային ուղղություն ունի:

2. Ամսագրի մեծ ժողովրդականությունը և հաջողությունը պայմանավորված է տարբեր շրջաններում դրա հրատարակիչների, հեղինակների գիտական նախասիրությունների բազմազանությամբ, նյութերի ընտրության շահեկանությամբ:

3. Տասնամյակներ շարունակ ամսագրի էջերում ներկայացվում են Օսմանյան կայսրության, հանրապետական շրջանի Թուրքիայում ապրող բազմազգ ժողովուրդներին վերաբերող նյութեր: Դրանք վերաբերում են այս ժողովուրդների կյանքի տարբեր կողմերին, սկսած նրանց ծագումնաբանության խնդիրներից, վերջացրած մշակույթի, լեզվի հարցերով:

4. **TARİH ve TOPLUM**-ի էջերում հաճախ են հանդիպում հայկական մթնոլորտին առնչվող նյութեր: Դրանց մի մասի հեղինակները հայեր չեն: Ամենից շատ հանդիպողները հայ հեղինակներից պոլսահայ հայտնի մատենագետ Գևորգ Փամբուկյանի հոդվածներն են:

5. Հայերին վերաբերող հրապարակումների օտար հեղինակների մի որոշակի մասը, թուրքական պատմական ընկերության հակահայ կեցվածքին հավատարիմ, ջանում է հնարավորինս նսեմացնել հայերի ու հայ գործարար, մշակութային շրջանակների ունեցած ներդրումը՝ դիմելով խեղաթյուրումների ծայրահեղ արտահայտությունների, որոնք, ցավոք, Գևորգ Փամբուկյանի մահվանից հետո մնացել են անպատասխան:

ՄԵԿՈՒԹԱԿՈՂՈՒՄԻ ԱՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԻ «ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»

1. Գաղտնիք չէ, որ իբրև Անդրկովկասում ուշ հաստատված նախկին քոչվոր ժողովուրդ, չունենալով վաղ անցյալից եկող մշակութային, ի մասնավորի՝ գրական-գեղարվեստական քիչ թե շատ լուրջ արժեքներ, ադբեջանցիներն ավելի քան կես դար առաջ սկսել են այդ բացը լրացնել՝ ի հաշիվ այլ ժողովուրդների (առաջին հերթին պարսից և հայ) մշակույթի՝ և պետք է խոստովանել, որ արդեն կարողացել են շատ բան «սեփականել»: Ասվածի լավագույն հաստատումը XII-XIII դդ. պարսիկ ականավոր գրող Նիզամի Գյանջևիի «ադբեջականացումն» է:

2. Եթե խորհրդային միասնական պետության կազմում լինելու տարիներին, երբ տիրապետող էր կոմունիստական ասված գաղափարախոսությունը, և ամբողջ երկրով մեկ ամեն ինչին տոն ու ընթացք էր տալիս Մոսկվայում նստած ԽՄԿԿ ղեկավարությունը, իսկ դա նշանակում է, որ կային խաղի մշակված կանոններ, և ադբեջանցիները (և ոչ միայն նրանք) չէին կարող լրիվ անտեսել դրանք ու գործել ինքնազուխ, ապա միանգամայն այլ է պատկերը հետխորհրդային տարիներին. ազատվելով Մոսկվայի քիչ թե շատ զսպիչ սանձից՝ նրանք այլևս չեն բավարարվում միայն գործնական մշակութագողությամբ, այլ փորձում են դրան տալ «տեսական հիմնավորում»՝ կանգ չառնելով և ոչ մի միջոցի առջև:

3. Այլ պայմաններում, հարկավ, կարելի էր և անտեսել ու արհամարհել դրանք, բայց նկատի ունենալով, որ տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետության այժմյան պայմաններում շատերը, ցավոք, չունեն ստացած ինֆորմացիայի քննադատական-վերլուծական յուրացման մշակույթ, ստիպված ենք անդրադառնալու գեղարվեստական գրականության պատմության ադբեջանական մի յուրօրինակ մեկնաբանության, որը, ըստ էության, ոչ այլ ինչ է, քան մշակութակողորպուտի տեսական հիմնավորման ու արդարացման փորձ:

4. Հիմնական ասելիքը թողնելով բուն գեկուցմանը՝ այս դեպքում հարկ էմ համարում մեջբերել միայն այդ «տեսության» հիմնադրույթներից մեկը. բոլորովին վեջերս (2009 թ.) Մոսկվայում հրատարակված՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՃՄԱՐԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿԵՂՇԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հայկական ճարտարապետության հուշարձանների ուսումնասիրությունը վերջին տասնամյակներում Ի շահ աղբբեջանական տարածքային գավթողական նպատակների ենթարկվեց գաղափարական ինտերվենցիայի: Սա առաջին միջոցառումը չէր և իր նախօրինակներն ուներ թուրքական և ինչ որ չափով վրացական նմանօրինակ ծրագրերի, որոնք իրականացվել էին դեռևս 20-րդ դարի կեսին: Ի տարբերություն նշվածների՝ աղբբեջանական քարոզչական մեքենան իր մասշտաբներով այլ բնույթ կրեց: Այն փուլավոր ծրագիր էր, որ ստեղծելով պատմական հենք, աստիճանաբար ընթացավ դեպի տարածքային պատկանելության խեղաթյուրումների և այդ խորքով՝ քաղաքաշինական, հուշարձանների փաստագրավերլուծական նենգափոխումների, ինչպես նաև հուշարձանապահպանության միջազգային նորմերի բացահայտ խախտումների: Ակնարկվող իրադարձությունը հակամարդասիրական՝ մշակույթի և առաջին հերթին ճարտարապետության պատմության միջազգային նվաճումների երկուհարյուրամյա ձեռքբերումների ոտնահարում է: Բնականաբար հարցի լուծումն անհետաձգելի արդիականություն ունի թե՛ ազգային ինքնության և թե՛ միջազգային գիտության փաստերն անաղարտ պահելու տեսակետներից: Հարցին մինչև օրս անդրադարձել են մի շարք գիտնականներ, որոնք իրենց դիրքորոշումներում փաստերն ամրագրող և այս կամ այն հրատարակությունը գրախոսող ելակետ ունեն: Ի տարբերություն նշվածի, սույն հաղորդման մեջ հարցը դիտարկվում է որպես 20-րդ դարի մշակութաբանության և ճարտարապետական ուսումնասիրությունների բովանդակային կտրվածքով: Համընդհանուր ճարտարապետության պատմության կառուցվածքի լույսի ներքո բնութագրվում են հայկական ճարտարապետության ուսումնասիրության հիմնահարցերն ու առանձնահատկությունները: Նույն տեսանկյունով և սկզբունքային հրատարակությունների (ՅՄԱ, 1966) հետևողությամբ մեկնաբանվում է աղբբեջանական ճարտարապետության պատմությունը՝ մինչև խնդրո առարկա քարոզչությունը և

«աղբբեջանական» բանահյուսությունն ու գրական հուշարձաններն անփոփոզ մի ստվար ժողովածուի առաջաբանում կարդում ենք. «...ինչպես որ մարդկային քաղաքակրթության օրրան Երկիր մուրակի բնական հարստությունները վերաբերում են ամբողջ մարդկությանը, անկախ այն բանից՝ ապրում է այդ տարածքի վրա այս կամ այն ժողովուրդը, էթնիկ որոշակի խումբը, այդ պատճառով էլ մշակութային-քարոյական արժեքների գանձարանը պատկանում է ամբողջ մարդկությանը և ոչ թե առանձին ժողովուրդներին, որոնք որոշակիորեն ստեղծել են համաշխարհային մշակույթի գլուխգործոցների ինչ-որ մասնիկ»¹: Հարկ կա՞ ասելու, որ մեքքերված միտքն ամբողջովին անհեթեթություն ու աղաղակող սուտ է, որովհետև նախ՝ չի կարելի հավասարության նշան դնել երկրի ընդերքի բնական հարստությունների և երկրի վրա եղած հոգևոր-մշակութային արժեքների միջև: Երկրորդ, աշխարհի ոչ մի հանքային-բնական հարստություն հավասարապես չի պատկանում ամբողջ մարդկությանը, առավել ևս՝ մշակութային արժեքները: Երրորդ, եթե այնպես լիներ, ինչպես պնդում են «արգո գիտնականները», ապա Աղբբեջանի ընդերքի նավթն ու գազը չէին դառնա քաղաքական խնդիրների լուծման խաղաքարտ, իսկ հին Տուրայի հայկական գերեզմանատան հազարավոր խաչքարերն ու հայկական մյուս հուշարձանները՝ վանդալիզմի զոհ:

¹ Бекир Набиев, Теъмур Керимля. Тысячелетняя школа гуманизма и красоты, в кн.: "Звездная гроздь. Фолклор и литературные памятники Азербайджана", М., Художественная литература, 2009, с. 6. Ի դեպ՝ նշված հեղինակներից առաջինը Աղբբեջանի ԳԱԱ ակադեմիկոս ու նույն ակադեմիայի Նիզամու անվան գրականության ինստիտուտի տնօրեն է, իսկ երկրորդը՝ համապատասխանաբար՝ թղթակից-անդամ ու փոխտնօրեն:

դրանից հետո: Հայկական ճարտարապետության դրույթները խեղաթյուրող ադրբեջանական հրատարակությունները կարելի է դասակարգել երեք տեսակի, որոնք ընդհանուրից դեպի մանրամասն ընթացող ռազմավարություն ունեն: Դրանք, որպես կանոն, շրջանառության են դրվում պրոպագանդայի արդիական միջոցներով և գիտահետազոտական դրվածքով հիպոթեզներ են կամ լավագույն դեպքում ամկա փաստացի նյութերի այլընտրանքային հնարավոր մեկնաբանություններ:

Եզրակացություններ՝

1. Հայկական ճարտարապետության պատմության տեսությունը, ինչպես նաև մինչև ուսումնասիրվող գաղափարխոսական ինտերվենցիան ադրբեջանական ճարտարապետության պատմության տեսությունը միջազգային կատեգորիաներ են: Լինելով միջազգային տվյալ բնագավառի բաղկացուցիչները՝ դրանք ունեն համապատասխան կառուցվածք, որտեղ հետագա փոփոխություններն ընդունելի են միայն և միայն հիմնավոր լինելու դեպքում:

2. 20-րդ դարի վերջին տասնամյակներում մշակութաբանական բեմ զգված ադրբեջանական քարոզչությունն իր տեսակետներով միանգամայն փոխում է ադրբեջանական ճարտարապետության միջազգային պատկերացումները: Այն քաղաքական ելակետ ունի և որդեգրում է «Նպատակն արդարացնում է միջոցը» իդեոլոգիա, ընդորում նպատակն անմարադասիրական է, իսկ միջոցը՝ հակազիտական:

3. Ադրբեջանական քարոզչության իրականացրած՝ «փաստերը շուտալու աշխարհայացքը» ադրբեջանական ճարտարապետության պատմությունն առաջնորդեց դեպի դուալություն, որտեղ բաղադրիչները մասնագիտականորեն անհամատեղելի հակադրություններ են: Ադրբեջանական քարոզչությունը ճարտարապետության պատմության և տեսության բնագավառում կատարված ձախողական փորձ է:

ԱՐԵՎԵՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ ԱՐԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տասնամյակներ շարունակ ադրբեջանական պաշտոնական պատմագրությունը (Ա.Ալեքսերով, Ջ.Բունիաթով, Ֆ.Մամեդովա, Ռ.Գեյուշև, Ռ.Մելիքով, Ա.Սումբատզադե և ուրիշներ) ժամանակակից «ադրբեջանցի ժողովրդի» պատմությունը հնեցնելու մտասևեռումով շարունակաբար փորձել է յուրացնել Արևելյան Այսրկովկասի էթնոմշակութային և քաղաքական պատմությունը:

Ադրբեջանական պատմագրությունը քողարկել է Կուրի ծախսափնյակում հնուց ի վեր, ինչպես նաև XIX դարում և XX դարի սկզբներին, ստվարաթիվ հայության գոյության փաստը: Հետամտելով պատմական իրականության հետ կապ չունեցող քաղաքական նպատակներ՝ ադրբեջանցի «ժողովրդագիրներն» իրենց հրապարակումներում առաջնորդվում են թերի հաշվառումներով և խիստ աղավաղված ցուցանիշներով, որոնք մեկնաբանվում են ազգայնական դիրքերից: Ավելին՝ նրանք չեն խորշում միտումնավոր կերպով պաշտոնական վիճակագրական տեղեկագրերում քաղաքների (Նուխի, Շամախի, Բաքու և այլն) էթնոժողովրդագրական պատկերին վերաբերող նյութերը կեղծելուց:

Վերջին ժամանակաշրջանում ադրբեջանական պատմագրությունը (Ս.Աշուրբեյի, Գ.Աբդուլևաև, Ֆ. Թադիև և ուրիշներ) մեծ տեղ է հատկացնում հատկապես Բաքու քաղաքի՝ XVIII-XIX դդ. էթնոժողովրդագրության հիմնահարցերին: Անդադրում մոլուցքով նրանք ջանում են «հիմնավորել ադրբեջանցիների հնաբնակության» առասպելը՝ Բաքվում:

**ՍՈՒՍԱՅԻԹ ԵՎ ԲԱՔՎԻ ՋԱՐԴԵՐԻ ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ
ԿԵՂՇԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հայտնի է, որ 1988 թ.-ի փետրվարին Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի օրինական պահանջին Ադրբեջանը հակադարձեց բռնություն ու բիրտ ուժը, ջարդերն ու կոտորածները, ցեղասպանությունը:

1988-1990 թթ. Սունգայիթում, Կիրովաբադում, Բաքվում հայ բնակչության նկատմամբ ադրբեջանական ղեկավարության իրականացրած անօրինակ բռնությունների նպատակն էր ահաբեկել հայերին ու հարկադրել հրաժարվելու իրենց սահմանադրական օրինական պահանջներից, նրանց վտարել ոչ միայն իրենց բնակավայրերից, այլև ընդհանրապես Ղարաբաղից: Այդ օրերին Ադրբեջանի շատ ղեկավարների կարգախոսն էր՝ «Մահ հայերին»: Հայ բնակչության ջարդերը տևեցին օրեր շարունակ, իսկ Բաքվի 1990 թ.-ի հունվարի 13-ի կոտորածը՝ 7 օր անընդհատ:

ԽՍՀՄ փլուզման նախօրեին Ադրբեջանում հակահայկականության քարոզը վերստին ակտիվացավ ԼՂԻՄ կարգավիճակին առնչված հիմնախնդրի համատեքստում: 1988-1990 թթ. Սունգայիթի, Կիրովաբադի և Բաքվի ցեղասպանական գործողություններ հրահրվեցին և ընթացան ադրբեջանական հասարակության ներսում հատուկ շրջանավոր ապատեղեկատվությամբ, ըստ որի հայերը «դաժանություններ» էին իրականացնում ՀԽՍՀ և ԼՂԻՄ սահմաններում բնակվող ադրբեջանցիների նկատմամբ: ԽՍՀՄ փլուզումից հետո ադրբեջանական ապատեղեկատվական քաղաքականությունն ավելի ակտիվացավ, որի նպատակն էր. ա) Հանրային կարծիքը համախմբել «ծավալապաշտական» նկրտումներ ունեցող «հայ անջատողականների» և «ագրեսորների» դեմ պայքարում, բ) Հայկական զինված ուժերի «բռնագավթած» տարածքներն «ազատագրել» և մոտալուտ հաղթանակի անխուսափելիության գաղափարներ սերմանել հասարակական գիտակցության մեջ:

Ըստ պաշտոնական հաղորդումների՝ Սունգայիթում ցեղասպանության հետևանքով զոհվել էր 32 հայ, իրականում դիարաններում այդ օրերին գրանցվել էր 115 դիակ: Ջոհերի թիվը 100-ից ավելի էր: Ընդհանուր նյութական վնասը հաշվարկվեց 216 հազար ռուբլի:

Միայն երեք անձի վերաբերյալ գործեր հանձնվեցին ԽՍՀՄ Պերագույն դատարան: Վկաների ցուցմունքներով մերկացվեցին ադրբեջանցիների ոճրագործությունները: Թվում էր, թե հրապարակայնորեն կդատապարտվեն ոճրագործ ցեղասպանները, այնինչ 94 մեղադրյալների վերաբերյալ 30 քրեական գործերը մնացին անորոշ վիճակում: Մոսկվայում քննվեց ընդամենը 1 գործ, և դատարանը միայն մեկին դատապարտեց մահվան, իսկ մնացյալ գործերի ճակատագիրն առ այսօր հայտնի չէ: Փաստորեն, Ադրբեջանի հանրապետության պետական, կուսակցական, ազգայնամուլ ղեկավար գործիչներ Ալիևը, Իսկենդերովը, Սուլեյմանովը, Մամեդովը, Վեզիրովը և շատ ուրիշներ քրեական կարգով դատական պատասխանատվության չենթարկվեցին: Միայն հայ ազգին պատկանելու շարժառիթով Բաքվում սպանվեցին 200-ից ավելի հայեր, որոշ տվյալներով՝ 150-300, իսկ մեկ այլ աղբյուրի համաձայն՝ հունվարյան ջարդերի օրերին Բաքվում զոհվածների մեջ 400-ից ավելին հայեր էին: Բաքվում հայկական ջարդերի վերաբերյալ որևէ քրեական գործ չհարուցվեց: Մոսկվան չցանկացավ բացահայտել սպանդի ու ջարդի կազմակերպիչներին ու ոգևորողներին: Ադրբեջանում սպանված ջարդարարները հայտարարվեցին «ազգային հերոսներ»: ԽՍՀՄ Գլխավոր դատախազ Ա. Սուխարևը լռությամբ պաշտպանեց Բաքվում կատարված վանդալիզմը:

Սունգայիթում, Կիրովաբադում և Բաքվում իրականացված հայոց ցեղասպանության մերժմամբ ադրբեջանական կեղծարարությունը շարունակվեց հայերին «ադրբեջանցիների ցեղասպանություն» իրականացնելու մտացածին մեղադրանքում: Այս տեսակետը զարգանում է 1990թ. հունվարին Բաքվի հայության կոտորածների պատմական իրադարձությունների խեղաթյուրման հիմքի վրա: 1990 թ. Բաքվում խորհրդային բանակի գործողությունների արդյունքում զոհված ադրբեջանցիները ներկայացվում են որպես հայկական սադրանքների զոհեր: Այս թեման այսօր էլ Ադրբեջանում հակահայկական քարոզչության թեմաներից է: Իրադարձությունները հաճախ ներկայացվում են համատեքստից կտրված՝ ղեպքերի մասին հիշատակումն սկսելով միայն հունվարի 20-ից, շրջանցելով հունվարի 13-ին հայերի ջարդերը և արտաքսումը, որի պատճառով էլ խորհրդային բանակը, թեև ուշացած, հայտնվել էր Բաքվում: Հունվարի 20-ի իրադարձությունները ներկայացվում են իբրև բողոքի ձայն բարձրացրած ադրբեջանցիներին խորհրդային իշխանությունների ճնշել՝ դրանում հայերին անուղղակի-

րեն մեղքի բաժին վերագրելով: Իսկ բոլոր այդ դեպքերում, երբ հիշատակվում են հայկական ջարդերի որոշ իրողություններ, ապա դրանք մեկնաբանվում են իբրև հայերի կազմակերպած սադրանք, որոնց միամտաբար կուզ գնացին ադրբեջանցիները: Վերջին հիմնավորումը վերաբերում է հատկապես 1988թ. Սումգայիթի և Կիրովաբադի ջարդերին: Այս նույն սկզբունքով ադրբեջանական կեղծարարությունը 1992թ. Խոջալուի դեպքերը ներկայացնում է իբրև հայկական զինվորականության իրականացրած միտումնավոր սպանություն և ուրեմն՝ «ցեղասպանություն»: Այս բոլոր ուղղություններով իրականացվող կեղծարարությունը ծառայում է ոչ միայն Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվական հոսքերին հակակշռի, այլև ադրբեջանցիներին որպես «զոհի կերպարի» ամրագրմանն ու հայերից «թշնամու կերպարի» ստեղծմանը:

Նենգափոխելով 1988-1990թթ. Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում հայ բնակչության նկատմամբ ադրբեջանական ղեկավարության ցեղասպանական գործողությունները՝ ադրբեջանցի կեղծարարների քարոզչության ոգով ստեղծվում են նոր «հիշողության վայրեր», ինչպիսիք են «Խոջալուի ցեղասպանությանը» նվիրված հուշարձանը, Շեհիդների ծառուղին՝ Ղարաբաղյան պատերազմում զոհվածների գերեզմաններով, 1990թ. հունվարի 20-ին խորհրդային զորքերի Բաքու մտնելու ժամանակ զոհված ադրբեջանցիների հիշատակի հուշակոթողը և այլն: 1998թ. նախագահ Հ.Ալիևի հրամանով մարտի 31-ը հռչակվեց ադրբեջանցիների «ցեղասպանության օր», որի իրականացման համար պաշտոնապես մեղադրվում էին հայերը: Այդ հրամանագրով հիմք ստեղծվեց հակահայկական հատուկ քարոզչության համար:

Ձեկուցման մեջ Սումգայիթի և Բաքվի ցեղասպանությունների ադրբեջանական կեղծարարության նպատակների ու գործադրած մեթոդների վերլուծությամբ արվում են կարևոր եզրակացություններ, որոնք կնպաստեն վերոնշյալ փաստերին իրավաքաղաքական գնահատականներ տալուն:

ՐԱԲՎԻ ԷՊՈՊԵՆՍ (1918թ.) ՈՐՊԵՍ ՀԱՅ ԶԻՆԱԿԱՆԻ ՓԱՌՔԻ
ՀՈՒՆԱՔԱՐ

Թերևս, ճիշտ է այն պնդումը, որ աշխարհի ամենամոռացված տարածաշրջաններից մեկը՝ Այսրկովկասը, տեսանելի ապագայում կմնա ինտենսիվ հակամարտության գոտի: Հակառակ եզրակացությունը առարկայազուրկ է: Դա նշանակում է. տարածաշրջանում տեղեկատվական պատերազմը կկրի անընդհատ (պերմանենտ) բնույթ:

Ուստի նպատակահարմար է տեղեկատվական հակամարտությունը շահելու համար, ավելին, այդ հակամարտությունը ուղղորդելու նպատակով, դիմել «հին աստվածներին», ըստ պատշաճին գնահատելով.

- 1) հայ զինական ուժի (պատմական) ծառայությունների տարբեր դրվագները, հայոց ազգային արժանապատվությունը,
- 2) հաղթահարել հայոց ռազմաքաղաքական պատմության խեղաթուրումները,
- 3) հիշեցնել քաղաքակիրթ աշխարհին, և ոչ միայն նրանց, Հայաստանի վեհությունը:

Այդ նպատակին լավագույնս ծառայում է 1918 թվականի հունիսի 7-ից սեպտեմբեր Քյուրդամիրից մինչև Բաքու ծավալված ռազմական գործողությունների և դրանց առնչված իրադարձությունների էպոպեան՝ անգիջում կռիվը թուրք-գերմանական զորախմբերի և հայոց ազգային զորամասերի միջև:

ԳԱՐԻԿ ՔԵՈՅԱՆ
քաղաքական գիտությունների դոկտոր, ԵՊՀ

**ԱՂՐԲԵՋԱՆԻ ԴԵՐԻ ԳԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՏԱՐԱԾԱԵՐՁԱՆԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՆՆԹԱՑՆԵՐՈՒՄ**

- Աղբբեջանի արտաքին քաղաքական դոկտրինան, նկատի ունենալով արդի աշխարհում էներգետիկ անվտանգության առաջնահերթությունները, հիմնված է նավթի և մյուս էներգակիրների արտահանման ու տեղափոխման գործում երկրի ունեցած հումքային ու տրանզիտ հնարավորությունների վրա: Իհարկե, էներգետիկ և տրանզիտ հնարավորությունները մեծ առավելություններ են տալիս Աղբբեջանին, մեծացնում են նրա կշիռն ու ազդեցությունը միջազգային քաղաքականության մեջ, սակայն, որքանով էլ տարօրինակ է, երկրի քաղաքական էլիտան հաճախակի հանդիպում է լուրջ խոչընդոտների արտաքին քաղաքական ասպարեզում, երբ սկսում է գերազնահատել նավթային դիվանագիտության նշանակությունը: Սրանում կարելի է համոզվել՝ դիտարկելով հետխորհրդային ժամանակաշրջանում տեղի ունեցած տարածաշրջանային գործընթացները:

- Արտասահմանյան խոշոր նավթային մոնոպոլիաների ներկայությունն իր հետ բերում է նաև օտարերկրյա քաղաքական թելադրանք և որոշակի խաղի կանոնների պարտադրում, որը ոչ միշտ է համապատասխանում երկրի պետական շահերին: Մյուս կողմից էլ այսօր Աղբբեջանի նավթային հեռանկարները, ի համեմատ անցյալ դարի սկզբի, համապատասխանաբար սահմանափակ են, սահմանափակ են նաև «երկրի ռեսուրսային» բարգավաճման հնարավորությունները: Աղբբեջանը, կարծես, գտնվում է ռեսուրսային առասպելի ազդեցության ոլորտում: Երկրի «նավթային ռազմավարությունը» երբեմն հանգեցնում է քաղաքական կարճատեսության և ձախողումների:

- Աշխարհաքաղաքական նոր իրավիճակի արդյունքում մերձկասպյան երկու պետությունների փոխարեն (ԽԱՀՄ և Իրան) հանդես եկան հինգ պետություն (ավելացան Աղբբեջանը, Ղազախստանը, Թուրքմենստանը)՝ կասպյան նավթային պաշարների նկատմամբ իրենց լուրջ հավակնություններով: Եվ պատահական չէր, որ հետխորհրդային շրջանում հրատապ էր Կասպից ծովի բաժանման խնդիրը, որը դարձել է

մերձկասպյան պետությունների ավելի շատ հակամարտության, քան թե համագործակցության գործոն: Ոնենալով էներգետիկ պաշարներ կասպյան երկրները և նաև նավթային ռեսուրսներով հարուստ Աղբբեջանը, հայտնվեցին բարդ իրավիճակում: Մոտակայքում այդ երկրները չունեն ոչ՝ այդ ռեսուրսների խոշոր սպառողներ, ոչ՝ անհրաժեշտ երկարության և հզորության գազամուղներ և նավթամուղներ, ոչ՝ դրանց փոխադրման համար անհրաժեշտ ծովային ուղիներ, ինչը հանգեցնում է Ռուսաստանից նրանց կախյալության: Եվ ստացվում է այնպես, որ միջազգային կշռի բարձրացմանը զուգընթաց, նավթը բերում է նաև բարդ հիմնախնդիրներ, ծնում լարվածություն, հակասություններ և կախյալություն հարևաններից ու տերություններից:

- Աղբբեջանի 90-ական թթ. նավթային քաղաքականության մեջ հաջորդը նավթամուղների հիմնախնդիրն էր: Կասպից ծովի նավթի փոխադրման ուղիների ընտրության հարցում բախվում են բազում շահեր: Կառուցված Բաքու-Ջեյհան նավթամուղը դարձավ տարածաշրջանում Միացյալ Նահանգների վարած էներգետիկ քաղաքականության հաջողության դրսևորումներից մեկը: ԱՄՆ-ը ձգտում է նաև օտարել Կենտրոնական Ասիայի երկրները Ռուսաստանից, որն ամենևին չի նպաստում Աղբբեջանի տարածաշրջանային դիրքերի ամրապնդմանը: Դրա համար էլ ամերիկյան ազդեցության աճը Աղբբեջանին բերեց նաև որոշակի խնդիրներ ռուսական և իրանական ուղղություններում: Նավթամուղի գործարկումով ձախողվեցին առաջարկված էներգակիրների արտահանման Ռուսաստանի հյուսիսային ուղին (Բաքու-Նովոռոսիյսկ)։ ինչպես նաև Իրանի կողմից ակտիվորեն առաջ քաշվող հարավային ուղին, այսինքն՝ նավթամուղի կառուցումը Աղբբեջանից իր տարածքով ուղին, այսինքն՝ նավթամուղի կառուցումը Աղբբեջանից իր տարածքով դեպի Պարսից ծոցի իրանական նավահանգիստները: 2000թ. ԱՄՆ նախագահական նոր ընտրությունների ընթացքում ձևավորված Ջորջ Բուշ-կրտսերի նոր վարչակարգը առաջադրեց արտաքին քաղաքականության նոր հայեցակարգ: ԱՄՆ-ը մերժեց տարածաշրջանային կոնֆլիկտներին ակտիվորեն միջամտելու քաղաքականությունը՝ իր գործողությունները ենթարկելով ազգային շահերի պաշտպանությանը: Փաստորեն, ամերիկյան աջակցությամբ տարածաշրջանային դիրքերն ամրապնդելու Բաքվի ակնկալիքները չարդարացան:

- Խուսափելով կողմնակալ, միտումնավոր դիրքորոշումից՝ մենք չենք ժխտում, որ տարածաշրջանային տնտեսական, տրանսպորտային և հաղորդակցային գործընթացներում Աղբբեջանի դերը, միանշա-

նակորեն առաջնային է եղել Արևմուտքի առջև քաղաքական կշիռի բարձրացման գործում, բայց Ադրբեջանը միշտ ձախողվել է, երբ փորձել է «փոխել» նավթը Ղարաբաղյան հիմնահարցի լուծման հետ: Նավթի պատմությունը և Ղարաբաղյան կարգավորումը զարգանում էին տարբեր հարթություններով: Միակ ուղղակի կապը կարող էր լինել Բաքու-Ջեյհան նավթամուղի անցումը Հայաստանի տարածքով (սա տարբերակներից մեկն էր), սակայն Երևանում 1998թ. ձևավորված նոր իշխանությունը կտրականապես մերժեց այս հարցի շաղկապումը կոնֆլիկտի լուծմանը:

- Նավթային հարստությունը երբեմն ունենում է նաև ներքաղաքական ու ներտնտեսական անցանկալի հետևանքներ: Ադրբեջանը դեմոկրատական գործընթացների վրա նավթի բացասական ազդեցության հիմնական օրինակներից է, քանի որ ածխաջրածնային հարստությունների վերահսկողությունը նավթ արդյունահանող երկրների ղեկավարությանը գրկում է իշխանության բաժանման և քաղաքական էլիտայի համար ռոտացիայի պայմանների ստեղծման որևէ խթանից: Նավթադուլարները իշխանություններին շատ հարմար հնարավորություն են տալիս իրենց լեգիտիմությունը փողով գնելու կամ ոստիկանական-ճնշող կառույցների միջոցով իրականացվող բռնությամբ և ոչ թե մրցակցային պայքարի ու ժողովրդավարական ընտրություններով գործելու: Պետության զգալի կախյալությունը բնական պաշարների արտահանումից, երկարատև հեռանկարում վերջինիս խոցելի է դարձնում ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական ու սոցիալական ոլորտներում:

- Ըստ միջազգային այն կազմակերպությունների և առաջատար արևմտյան գերտերությունների ներկայացուցիչների իրականացրած անկողմնակալ վերլուծության, որոնք ընդգրկված են դարաբաղյան խաղաղ կարգավորման գործընթացում, բավականին վերապահորեն է գնահատվում Ադրբեջանի ուժային շանտաժի իրականությունը՝ հիմնված «նավթային գերշահույթների» վրա: Հիմնականում, նավթային գործոնի ազդեցությունը տարածաշրջանի ռազմականացման և Ղարաբաղյան հակամարտությունում ռազմական գործողությունների վերսկսման վրա, ուսումնասիրված ու հրատարակված էր 2007թ. նոյեմբերին Միջազգային ձգնաժամային խմբի «ICG» հատուկ վերլուծական զեկույցում:

ՎՈՒՄՈՂԱՆՆԵՐԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ԳՈՏՈՒՄ. ԱՐՑԱՆԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. ՔԱՌՁՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՀԱԿԱՔԱՌՁՉՈՒԹՅՈՒՆ

Ձեկուցման մեջ փորձ է արվում Արցախի Տիգրանակերտի հայտնաբերման, հետազոտության և հանրահռչակման գործընթացի քննությամբ ներկայացնել պատմական ժառանգության դերակատարման և դրանից բխող խնդիրների կարևորությունը հայ-ադրբեջանական հակամարտության մեջ:

ա) Տիգրանակերտի հնագիտական հետազոտությունը հայ մշակութային ժառանգության հայտնաբերման, հետազոտության, հանրահռչակման և այն այժմյան մշակութային գործընթացի մաս դարձնելու վերջին տարիների ամենահաջող ձեռնարկներից է: Դրան նպաստում են ծավալուն պեղումները, հուշարձանի լրացուցիչ մաքրումներն ու լանդշաֆտային տեսքի պահպանումը, հանրահռչակմանը նպատակաուղղված ամբողջական քաղաքականությունը՝ հրատարակություններ, ինտերնետային կայքի ստեղծում, պարբերաբար կազմակերպվող ցուցահանդեսներ և, ի վերջո, Տիգրանակերտի հնագիտական թանգարանի ստեղծում հենց հուշարձանի տարածքում: Արդյունքում Տիգրանակերտն այսօր ամենաշատ այցելուներ ունեցող, ինտերնետում լայնորեն ու մանրամասնորեն ներկայացված, հանրությանն առավել քաջածանոթ հուշարձանն է Արցախում:

բ) Այս ընթացքի ետնախորքի վրա խիստ ուշագրավ է ադրբեջանական հակաքարոզչության քննաբանությունը: Այն կարելի է բնութագրել որպես անլրջությունից դեպի զգաստացում, փաստերի անտեսումից մինչև դրանց ընդունման ու մեկնաբանության գործընթաց, որի քննաբանությունն օգնում է հասկանալու նաև սեփական ձեռնարկումների հաջողության և անհաջողության պատճառները:

գ) Ակնհայտ հաջողությունների հետ Տիգրանակերտի հանրահռչակման գործընթացը երևան բերեց հայաստանյան գիտական հանրույթի խայտաբղետության, գիտական հետազոտություններում սիրողականության և սնապարծության, մշակութային ժառանգության հանդեպ վարած քաղաքականության, գիտության և մշակույթի կառավարմանն առնչված բազմաթիվ խնդիրներ, որոնց քննաբանությունը նույնպես զեկուցման հիմնական թեմաներից է:

ԷՐԿԱՐԴ ԴԱՆԻՆՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ՝ ԸՆԴՂԵՍ ԹՈՒՐՔ-
ԱՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿԵՂՇԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Արցախյան հաղթանակը Հայկյան ազատատենչ ակունքներից եկող ոգեղեն և գաղափարական վեհ-հայրենասիրական արժեքների մարմնավորումն է:

Համաձայն Գարեգին Նժդեհի՝ «Մարդկային գործերի մեջ Հայրենիքի պաշտպանությունն է ամենասրբազանը: Հայրենիքի չափ նվիրական է և պատերազմը հայրենական»:

1. Արցախյան հաղթանակը՝ պատմական արդարության վերականգնման գաղափարով հայրենասիրական ուժերի համախմբման և անձնագոհ պայքարի արգասիք է:

2. Հաղթանակի արդյունքներն ամուր պահպանում է Հայկական բանակը:

3. Արցախյան հաղթանակը հզոր ոգեղեն և գաղափարական լիցք է հաղորդում հայ երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Պատերազմի հրձիգի՝ Ադրբեջանի պարտությունը մարտադաշտում շարունակվում է նաև տեղեկատվական պատերազմում, քանզի ակտիվ թվացող, սակայն իր բովանդակությամբ հանցավոր թուրք-ադրբեջանական հակահայկական քարոզչությունը բացարձակապես զուրկ է օրինականությունից և գիտականությունից:

1. Հայոց ցեղասպանությունը՝ մարդկության և քաղաքակրթության դեմ հանցագործություն իրագործած Թուրքիան, մոլուցքով շարունակում է Արևմտյան Հայաստանի և Հայկական Կիլիկիայի բռնազավթումը, ինչպես նաև ձգտում է տարածաշրջանում իր ներկայությունը հաստատել «Կովկասյան պլատֆորմ» «գաղափարի» միջոցով:

2. Եկվոր՝ անդրալթայան տափաստաններից ներխուժած քոչվոր թուրք-օղուզների հետնորդները, ովքեր ԽՍՀՄ-ում «թաթարներ» կամ «թյուրքեր» էին անվանվում, 1930-40-ական թվականներից կոչվեցին «ադրբեջանցիներ», և նրանց համար սկսվեց «պատմության» հորի-

նում՝ որպես խորհրդային կեղծարարության գաղափարախոսության բաղկացուցիչ մաս: Ավելին, 1986թ. Բաքվում արտատպվեցին Ստամբուլում հրատարակված (1944թ.) «Իսլամ» հանրագիտարանի պանթուրքիստական «քարտեզներ»:

3. Բուն հայկական Նախիջևանի, Արցախի և Ուտիքի տարածքներում խորհրդային կենտրոնի քաղաքական և տեղեկատվական հովանու ներքո զազանային հոգեբանությամբ գործող «ադրբեջանական» իշխանությունները (որոնց թուրք-թաթար մուսավաթական նախորդները թուրքական զորքերի հետ 1918-1920թթ. իրագործել էին հայերի կոտորածը Բաքվում և Շուշիում) XX դ. 80-ականների վերջին 90-ականների սկզբին դարձան Սումգայիթում, Բաքվում, Գանձակում (Կիրովաբադ), Մարաղայում, Գետաշենում հայերի ցեղասպանության կազմակերպիչները:

4. Ստով ու կեղծարարությամբ լի Ադրբեջանի ագրեսիվ իշխանությունների և ադրբեջանական տեղեկատվական միջոցների համար ցնցում էր իրենց մեծաթիվ բանակի պարտությունը, և ներկայումս նրանք շարունակում են կեղծիքների, զրպարտությունների ու ապատեղեկատվության տարածումը:

5. Թուրքիան և Ադրբեջանը շարունակում են 1990-ական թվականների սկզբից սկսած Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի (Արցախ) Հանրապետության շրջափակումը, ինչպես նաև՝ տեղեկատվական պատերազմը, ինչը գաղափարական և բարոյական քայքայմամբ թելադրված թերարժեքության բարդույթ է:

6. Արցախի անկախության հռչակումը և Արցախյան հաղթանակի արդյունքները կարևոր փուլեր են պատմական և իրավական արդարության վերականգնման գործում:

7. Հայոց պատմագիտական և մշակութային հիմնարար ժառանգությունը հզոր վահան է ազգային արժեքների պաշտպանության գործում: Արցախյան հաղթանակի գաղափարական իմաստավորումն ազգային անվտանգության անկյունաքարն է տեղեկատվական պատերազմում, հատկապես՝ ընդդեմ թուրք-ադրբեջանական կեղծարարության:

ԱՆԵՔԱՆԴՐ ԻՍԿԱՆԱՐՅԱԼ
«Կովկասի ինստիտուտ» հիմնադրամ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՈՒԹՅՈՒՆ, ՀՈՇՈՂՈՒԹՅՈՒՆ.
ՈՍՋՍԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՏՔՔՍ

Տեղեկատվական պատերազմները քավական տարածված և բնական երևույթներ են: Դրանք հայտնի են հին ժամանակներից և մշտապես եղել են իսկական պատերազմների, թեժ և սառը կոնֆլիկտների ուղեկից: Այս կարգի պատերազմները կարող էին տևել տասնամյակներ, անգամ հարյուրամյակներ: Տեղեկատվական պատերազմների էական դերերից մեկը միշտ եղել է գորահավաքման գործառույթը, դրանք նաև փիառի գործիք էին ծառայում հնարավոր դաշնակիցների շրջանում: Այս տեսակի պայքարի համար հնում սովորաբար օգտագործվում էին կրոնական հիմնավորումներն ու մեկնությունները (օրինակ՝ խաչակրաց պատերազմների ժամանակ): Աշխարհականացմանը զուգընթաց սկսեցին ավելի շատ օգտագործել պատմական հիմնավորումներն ու մեկնությունները, որոնք մինչ այդ հիմնականում օժանդակ դեր ունեին:

Պատմությունն այսպիսի պատերազմներում դադարում է ծառայել ճանաչման և դաստիարակության նպատակներին և դառնում է գաղափարախոսական գործիք: Այսինքն՝ պատմական տեղեկությունները (կամ էլ հերյուրանքները) կիրառվում են քաղաքական նպատակների հասնելու համար: «Կառուցելով» պատմությունը՝ մարդիկ ձգտում են ժամանակակից սոցիալ-քաղաքական նպատակների, օրինակ՝ տարածքների նկատմամբ իրենց իրավունքների օրինականացման, քաղաքական գործող կառույցների կամ ընթացակարգերի գոյության հիմնավորումներին:

Հաճախ այսպիսի պատերազմներում առաջանում է մեկնությունների պայքար՝ մի մեկնությունը դառնում է մյուս՝ մրցակցող մեկնության հայելին: Մրցակից ժողովրդի հնությանը հակադրվում է սեփական ժողովրդի հնությունը, թշնամու տառապանքներին՝ իր տառապանքները, մշակութային նվաճումներին՝ ավելի մեծ իր նվաճումները: Այդուհանդերձ, հաճախ թշնամու նվաճումները, տառապանքները և հնությունը հերքվում են, ուստի այդպիսի պատերազմներում առավել հաճախ են

հանդիպում «եկվոր ժողովրդի» և «կեղծարար ժողովրդի» կերպարները:

Ի պատասխան հայտնվում են արտացոլված կերպարներ՝ «նրանք, ովքեր կեղծում են» և «նրանք, ովքեր սեփականում են»: Պատմությունը վերածվում է արտաքին գործոնների արծագանքի և մեկնությունների ու հակամեկնությունների միջև անվերջ պայքարի: Ամենակարևորը՝ կողմերը հեռանում են սկզբնական պատմական մեկնությունից. պատմությունը դադարում է ընկալվել որպես ճանապարհ, որն անցել են երկիրն ու ժողովուրդը՝ մինչև մեր օրերը, այլ միայն որպես գաղափարախոսական բանավեճի առարկա, ընդ որում, պատմությունն սկսում են այդ կերպ ընկալել ոչ միայն քաղաքական գործիչները, այլև դպրոցականները և արխիվներում աշխատող գիտնականները: Հասկանալ, յուրացնել և գիտակցել քո տեղն աշխարհում խնդիրն իր տեղը զիջում է ժամանակակից թշնամու հետ վիճելու, անհապաղ մարտահրավերներին պատասխանելու խնդրին:

Սակայն տեղեկատվական պատերազմում այդ կերպ հաղթել հնարավոր չէ: Արտաքին աշխարհի համար մեկնությունների պատերազմները լավագույն դեպքում ծիծաղելի են երևում, իսկ վատագույն դեպքում՝ անոթալի: Հետևաբար, անկախ իրենց վարկածների ճշմարտությունից, երկու կողմի համբավն էլ տուժում է: Դիտելով այս կամ այն պատմական իրադարձության առնչությամբ “X” ժողովրդի և “Y” ժողովրդի անվերջ վիճաբանությունը՝ կողմնակի դիտորդը տեսնում է միայն լեզվակռիվ և ոչ թե իրադարձություն, որը, ի դեպ, նրա համար համատեքստից դուրս է և հաճախ բացարձակապես հետաքրքիր չէ:

Խուսափել մեկնությունների պատերազմների երկու խնդիրներից՝ թե՛ հաղթանակի սկզբունքային անհնարինությունից, թե՛ իր ժողովրդի ինքնագիտակցությանը հասցրած լուրջ վնասից, հնարավոր է միայն պատմությունն անմիջապես ուսումնասիրելով ու մեկնաբանելով և ոչ թե ուրիշների մեկնաբանություններին արծագանքելով:

Փոխանակ ներկայիս թշնամուն թողնելու, որ քեզ տանի այն ուղղությամբ, ուր նրա խելքին կփչի, ավելի բանական է կառուցել պատմական մեկնությունների սեփական համակարգը, որի պահանջները թելադրվում են ներքին գերակայություններով և արժեքներով և ոչ թե «հարց-պատասխան» տրամաբանությամբ: Եվ դա վերաբերում է ոչ միայն ու նույնիսկ ոչ այնքան մասնագիտական պատմագիտությանը, որքան զանգվածային պատմագիտությանը՝ սկսած դպրոցական դասագրքերից մինչև կինոնկարներ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՓԱՍՏԵՐԻ
ԱՐԿԱՂՈՒՄՆԵՐԸ 2008-2010 ԹԹ. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆՐԱՍԱՏՉԵԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՐՔՈՒՐՆԵՐՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՐՈՆՁԻ ԴԱՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹՆ
ԻՐԵՆՑ ԿԵՐԱԳՐԵԼՈՒ ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՋ**

Մարդու գործունեությունը, հայրենիքի նկատմամբ սերն ու նվիրվածությունը, հանուն ընդհանուր շահի սեփական ստորադասելու, անհրաժեշտության դեպքում զոհաբերվելու պատրաստակամությունը հաճախ պայմանավորված են մարդու գաղափարական կերտվածքով և իր դավանած իրավացի լինելու համոզմունքով: Հասարակության գիտակցության և մտածելակերպի ձևավորման գործընթացում բացառիկ ազդեցություն ունի պատմական հիշողությունը: Մասնավորապես մեծ է հնագիտական արժեքների դերը, որոնք ընկալվում են որպես իրեղեն, անառարկելի վկայություններ: Այս առումով առանձնահատուկ է հատկապես բրոնզի դարի (Ք.ա. IV-II հազարամյակներ) հնագիտության դերը, երբ Հին Աշխարհում ձևավորվում էին առաջին քաղաքակրթությունները, վաղ պետական կազմավորումները, ժողովուրդները հիմնավորվում էին իրենց պատմական հայրենիքում՝ ձևավորելով էթնոմշակութային ընդհանրություններ: Մեր հարևանները և որոշ եվրոպացի գիտնականներ, նենգափոխելով փաստերը, Հայկական լեռնաշխարհի բրոնզի դարի մշակույթների կրողներ են համարում խուրիներին կամ հյուսիս-կովկասյան լեզվաընտանիքի ժողովուրդներին: Արդյունքում հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող հայերս զրկվում ենք մեր հայրենիքի բնիկները լինելու իրավունքից: Գաղափարապես ստեղծվում է մի հիմք, ըստ որի Հայկական լեռնաշխարհի ամբողջ տարածքը, նախքան այսպես կոչված հայերի ներգաղթը, ավելի քան երեք հազարամյակ բնակեցված է եղել կամ հարավ-վրացական մտացածին ցեղերով կամ ոչ հնդեվրոպական այլ ժողովուրդներով, այդ թվում՝ նաև թուրքերով: Հայաստանը հնդեվրոպացիների և հին արիների հայրենիք, իսկ հայ ժողովուրդը այս մշակույթները կերտողների անմիջական ժառանգ լինելը գիտականորեն հիմնավորելը այսօրվա հայագիտության կարևորագույն խնդիրներից է, որը վերջ կդնի մեր հարևանների նկրտումներին: Բացի այդ էապես կաճի մեր ժողովրդի, մասնավորապես զինվորականության հավատն ու ինքնագիտակցությունն իր ուժերի նկատմամբ՝ հիմնված նախնիների հոգևոր հզոր կերտվածքի վրա, կբարձրանա հայ ժողովրդի հեղինակությունը՝ իր հեռագնա բոլոր դրական հետևանքներով:

Հայաստանի Հանրապետությունում կատարվող պատմության և մշակույթի խնդիրների ուսումնասիրման, ընթերցող լայն շրջանակների համար գիտահանրամատչելի ու տեղեկատվական գրականություն ստեղծելու աշխատանքների թվում, ցավոք, առկա են նաև ոչ պատշաճ մակարդակով կատարված հրատարակումներ: Մի արատավոր երևույթ, որը, կարծես, դարձել է ընդունելի աշխատանք: Վերջինս էլ տարի առ տարի նոր թափ առնելով, ասես միտում ունի արմատավորվելու: Մի ցավալի ու վնասակար երևույթ, որն անտեսում են թե՛ գիտական շրջանակները և թե՛ պետական պատկան կառույցները:

Ջեկուցման մեջ այդպիսի գիտատեղեկատվական հրատարակություններից ներկայացվում են հետևյալները. «Հայտարան-2009» (Երևան, 2009, հրատարակիչ՝ «Գործարար տիեզերք» ՍՊԸ), «Նախիջևան. պատմական և արդի շրջանի որոշ հիմնահարցեր» («Վերլուծական նյութերի» ժողովածու, Երևան, 2009, հրատարակիչ՝ Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ): Ներկայացվում են նաև «Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր» հասարակական կազմակերպության՝ 2008-2010թթ. Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձանների տարածքներում տեղադրած տեղեկատվական հնգալեզվյա վահանակներում առկա-տարածվող հակագիտական, հակահայկական ու հակապետական փաստերը:

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱԼ
Հայկական Ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՆԱՐԺԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿ
ԱՐԵՎՄՏՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒ

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում կերտել է մշակույթի բազմաբնույթ և մեծաթիվ կոթողներ: Դրանց հիմնական մասը հայերի պատմական բնօրրանի՝ Հայաստանի տարածքում է:

Առաջին աշխարհամարտի ընթացքում՝ 1915 թ., Երիտթուրքերի կառավարությունը նախ զավթած հայկական 6 նահանգները (Վան, Բաղեշ, Կարին, Խարբերդ, Սեբաստիա, Տիգրանակերտ) թուրքական պետության կազմում ամրագրելու նպատակով ամբողջ երկրամասում իսպառ բնաջնջում է բնիկներին, ապա 1920 թ. հոկտեմբերին հարձակվում 1918 թ.-ից անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետության վրա և նվաճում նորանկախ երկրի արևմտյան շրջանները, մասնավորապես Կարսի մարզը և նույնիսկ օսմանյան պետության գավթումների բարձրակետում երբևէ թուրքերի ձեռքը չընկած Սուրմալուի գավառը:

Այսպիսով, 1920թ. նոյեմբերից խորհրդայնացած Հայաստանը և 1991թ. ծնունդ առած նրա իրավահաջորդ ներկայիս Հայաստանի Հանրապետությունն իր սահմաններում չի ներառում հայոց բնօրրանի արևմտյան ավելի քան 200.000 քառակուսի կիլոմետր մակերեսով նվիրական երկրամասերը, որ կազմում են շուրջ յոթ տասնյակ գավառ:

Ի հետևանք այս ամենի՝ հայկական պատմական հուշարձանների մեծագույն մասն էլ ինքնաբերաբար հայտնվել է ներկայիս ՀՀ սահմաններից դուրս:

Անցած մի քանի տասնամյակի ընթացքում ուսումնասիրելով Արևմտյան Հայաստանում եղած պատմական հուշարձաններին վերաբերող տվյալները՝ ակներևորեն համոզվում ես, որ ցեղասպանության միջոցով Արևմտյան Հայաստանը բնիկներից պարպելուց հետո թուրքական իշխանությունները լծվել են բնիկներից ավանդված նյութական մշակույթի հուշարձաններն անհետացնելու գործին, քանի որ դրանք դիտարկվել են որպես ուրացված և ժխտված պատմական իրականությունը մատնող անշունչ, սակայն չափազանց խոսուն վկաներ:

Հատկանշական է, որ ջարդարարության առաջնային թիրախ են ընտրվել հատկապես այն հուշարձանները, որոնք իրենց գոյությամբ առավել ցայտուն էին մատնանշում բնիկների ներկայությունը թեկուզ երբեմնի իրենց պատմական հայրենիքում: Այս պատճառով առաջնահերթորեն ոչնչացվում են հայ մշակույթի քրիստոնեական շերտի բաղկացուցիչ մաս կազմող վանքերն ու եկեղեցիները, բազմաազար արձանագիր տապանաքարերով և խաչքարերով հարուստ հայկական գերեզմանոցները:

1940-60-ական թվականներին Արևմտյան Հայաստանում հայկական հուշարձանները ոչնչացվել են նաև երկրի գինուժի գործադրմամբ: Դրանցից շատերը, զորավարությունների ժամանակ իբրև թիրախ, պայթեցվել են, իսկ սրբատաշ քարերն օգտագործվել որպես շինանյութ՝ ավելի հաճախ զորանոցների կառուցման համար: Մինչդեռ կանգուն մնացածները ցայժմ ծառայում են որպես գոմ, պահեստ, նույնիսկ բանտ, որոշ դեպքերում էլ վերածվում են մզկիթի կամ էլ հայտարարվում «սելջուկյան ճարտարապետության» նմուշներ:

Հակառակ թուրքիայում ընդունված պատմական հուշարձանների պահպանության ու վերականգնման օրենքի գոյության՝ մինչև 1990-ական թվականների վերջը ոչ մի հուշարձան չի վերականգնվել: Վերջին տարիներին ավելի նենգափոխման և յուրացման ծրագիր իրականացնելով՝ իշխանություններն սկսել են Անիում գինանշանի, Տիգրան Հոնենց եկեղեցու, պարիսպների, բնակելի թաղամասերի և առևտրական շարքերի, Կարսի Առաքելոց եկեղեցու, Աղթամարի Սբ. Խաչ վանքի վերականգնման աշխատանքները: Թվարկվածների շարքում վերջինս միակ դրական բացառությունն է՝ շնորհիվ մասնագիտական բարեխիղճ վերահսկողությունն իրականացրած ճարտարապետ Ջաքարիա Միրզան-օղլուի սրտացավ վերաբերմունքի:

Այն բանաձևից, որ ցեղասպանությունն էթնիկական կամ կրոնական խմբի ոչ միայն ֆիզիկական, այլև նրա մշակույթի ոչնչացումն է, բխում է, որ հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը թուրքական իշխանությունները գործադրել են նաև 1915 թ.-ից հետո և, ըստ էության, շարունակում են գործադրել ցայժմ: Կեցվածք, որը միանգամայն անհարիր և դատապարտելի է միջազգային կազմակերպությունների, ինչպես՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԻԿՈՄՈՍ-ի անդամ և եվրոպական ընտանիքի մաս կազմելուն հավակնող պետության համար:

ՎԱՐԴԻՄԻՐ ՎԱՐՂԱՆՅԱՆ
իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ՍՊ

ԻՐԱՎԱԿԱՆ ՔԱՐՈՋՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱԿԱՔԱՐՈՋՉՈՒԹՅՈՒՆԸ
ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ,
ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՉԱՆՈՂՈՒՄՆԵՐ

Արցախյան հակամարտության ժավադմանը համընթաց ձևավորվել են նաև դրա իրավական արժարժման առանցքային հիմնախնդիրները: Ի սկզբանե, 1988-1991թթ. հիմնահարցի իրավական արժարժումն առավելապես իրականացվում էր ԽՍՀՄ ներպետական իրավունքի համատեքստում: Խորհրդային Միության փլուզման զուգընթաց առավել արդիականացվեց հիմնահարցի արժարժումը ժամանակակից միջազգային իրավունքի լույսի ներքո: 1992-1994թթ. արցախյան հակամարտության իրավական ասպեկտների քննարկումը տեղափոխվեց Միավորված ազգերի կազմակերպություն: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ արցախյան հակամարտությանն առնչվող բանաձևերում փորձ կատարվեց հստակեցնել վերջինիս իրավական շրջանակներին առնչվող հիմնախնդիրները: ԵԱՀԿ Մինսկի խմբի ստեղծումից հետո Ադրբեջանը փորձեց արցախյան հակամարտության իրավական ասպեկտների քննարկումը վերստին տեղափոխել ՄԱԿ-ի համակարգ՝ անտեսելով այլ միջազգային կազմակերպության շրջանակներում դրա կարգավորման համար ստեղծված իրավական մեխանիզմները: Հստակ հասկանալով, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում հակամարտության կարգավորման առկա մեխանիզմի պարագայում, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը գերծ է մնալու որևէ գործողություն կատարելուց՝ Ադրբեջանը փորձեց հակամարտության իրավական հարթության հարցերի քննարկումը տեղափոխել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի օրակարգ: Արդյունքում, օգտվելով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում բանաձևեր ընդունելու յուրահատուկ ընթացակարգի առանձնահատկություններից (որի պարագայում բանաձևն ընդունված է համարվում, նույնիսկ այն պարագայում, երբ դրան կողմ է քվեարկում փոքրամասնությունը՝ մեծամասնության ձեռնպահ մնալու պարագայում), Ադրբեջանին հաջողվեց արցախյան հակամարտությանն առնչվող մի քանի բանաձև անցկացնել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում: Այդուհանդերձ, վերջին-

ներիս միջազգային իրավական բնույթի և բովանդակության վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանք թե իրավական, թե քաղաքական, թե զուտ տեխնիկական առումով բավականաչափ խոցելի են, իսկ դրանց ընդունման իրավաչափությունը, ընդհանրապես, լուրջ կասկածներ է առաջացնում:

Արցախյան հիմնահարցի իրավական հարթության շրջանակներում հատկապես կարևոր դերակատարություն ունեն միջազգային համաձայնագրերին արցախյան հակամարտության կողմերի մասնակցությանն առնչվող հիմնախնդիրները: ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո հստակորեն նկատվեց միջազգային համաձայնագրերին Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության մասնակցության անհամաչափությունը, որը շարունակվում է առայսօր: Ընդհանրապես, Ադրբեջանի Հանրապետությունը, ի սկզբանե, միջազգային իրավական փաստաթղթերին մասնակցելու հարցում առավելապես բացասական վերաբերմունք դրսևորեց՝ երկյուղելով դրանց միջոցով արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը ձանաչելուց: Ադրբեջանի նշված դիրքորոշումն առավել ակնառու դարձավ հատկապես միջազգային մարդասիրական իրավունքի փաստաթղթերին մասնակցելու, ինչպես նաև միջազգային համաձայնագրերին Արցախին առնչվող վերապահումներ կատարելու համատեքստում:

Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ արցախյան հակամարտության իրավական հարթության հիմնահարցերի արժարժման շրջանակներում հայկական կողմն արձանագրեց մի շարք հաջողություններ և ձեռքբերումներ: Այդուհանդերձ, վերջին տարիներին իրավական քարոզչության ոլորտում նկատվել են որոշ լուրջ ձախողումներ, որոնք, մասնավորապես, առնչվել են հակամարտության իրավական բնույթի խեղաթյուրման, միջազգային վեճերի խաղաղ կարգավորման առկա մեխանիզմի անտեսման, ադրբեջանական կողմի հակաիրավական քարոզչությանը միջազգային իրավական հակահարված տալու և այլ համանման հիմնահարցերի հետ:

ՎԻՉԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՄՈՒՄՔՆԵՐՈՒՄ**

Ինքնորոշման իրավունքը, հանդիսանալով մարդու իրավունքների հիմնաքար և ժամանակակից միջազգային իրավունքի կարևորագույն բաղադրյալ, մինևույն ժամանակ, իրենից՝ ներկայացնում է մարդու կուլտուրայի իրավունք և մյուս իրավունքների իրագործման կարևոր նախապայման: Նշված իրավունքը իր ամրագրումն է ստացել միջազգային իրավունքի հիմնական սկզբունք հանդիսացող ազգերի և ժողովուրդների իրավահավասարության սկզբունքի շրջանակներում, ինչով պայմանավորված է այդ իրավունքի հիմնարար նշանակությունը ժամանակակից միջազգային իրավակարգի համար:

Արցախի ժողովրդի պայքարը հանդիսանում է պայքար մարդու կարևորագույն իրավունքներից մեկի՝ ինքնորոշման իրավունքի իրագործման համար: Հանդիսանալով ինքնորոշման իրավունքի սուբյեկտ՝ Արցախի ժողովուրդը ստիպված էր գեները ձեռքին պաշտպանվել Ադրբեջանի «էթնիկական գաղմկների» քաղաքականությունից, ինքնորոշման իրավունքի ոտնահարումներից:

Փորձելով արդարացնել իր վարած քաղաքականությունը՝ Ադրբեջանը ջանում է նենգափոխել հակամարտության էությունը՝ այն ներկայացնելով որպես հակամարտություն Ադրբեջանի և Հայաստանի միջև: Նման մոտեցումը որևէ առնչություն չունի ինչպես իրողությունների, այնպես էլ միջազգային իրավունքի հետ:

Այս ենթատեքստում կարևոր խնդիր է հանդիսանում համակարգված և միասնական միջազգային իրավական դիրքորոշման հստակեցումը՝ որպես հիմնահարցի արդարացի կարգավորման կարևոր նախապայման: Խոսքը, մասնավորապես, գնում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ընթացքում Արցախի ինքնորոշման և Հայաստանի Հանրապետության դերակատարման մասին:

Միանշանակ, պետք է նշել, որ արդեն իսկ միջազգային հանրությունը որոշակի իմաստով ձանաչել է Արցախի ինքնորոշման իրավունքը՝ ամրագրելով այն որպես Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի ապագա կարգավորման հիմնարար սկզբունքներից մեկը: Սակայն դեռևս պահանջվում են վճռականություն և տարբեր ոլորտներում համակարգված աշխատանք, որպեսզի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դառնա միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ:

ԱՐԱՍ ՍԱՖԱՐՅԱՆ,
բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆ,
պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ

**ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՎ ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ
ԵՎ ՀԱՅ-ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՏԱՑՈՒՈՂ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԶՆՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՈՒՐՁ**

2008թ.-ից ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դասախոսների, մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողների ներգրավմամբ անցկացվում է թուրքական և ադրբեջանական ԶԼՄ-ներում ու վերլուծական կենտրոնների հրապարակումներում հայ թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների (մասնավորապես, Ցյուրիխյան արձանագրություններից ստորագրման ու վավերացման գործընթացների մասին) տեղեկատվության մշտազննում (մոնիտորինգ) ու վերլուծություն, ինչը կարևորվում է թե քաղաքագիտական (անվտանգային), թե գիտակրթական (համապատասխան մասնագետների, ռեկրիացիայի) տեսանկյուններից:

Մշտազննման արդյունքների ամփոփումը հնարավորություն է տվել ժամանակին հստակ կանխատեսումներ անել արձանագրությունների ստորագրման, հարակից գործոնների, քաղաքական հնարավոր զարգացումների, պետական գործիչների, փորձագիտական հանրությունների ու լրագրողների արձագանքների մասին:

Զեկուցման շրջանակներում փորձ է արվում մշտազննման արդյունքների հիման վրա քննարկելու վերոհիշյալ արձանագրությունների ստորագրման և դրանք ՀՀ ԱԺ-ի և ԹԱՄԺ-ի վավերացնելու գործընթացների սառեցման պայմաններում ստեղծված իրավիճակի հնարավոր «բոնուսների» խնդիրները:

**ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱԼ
պատմական գիտությունների թեկնածու, ԵՊ**

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒ

1. Թեմայի արդիականությունը.

Մարդկության պատմության ընթացքում միշտ կարևորվել են քարոզչական խնդիրները: Դրանք այսօր ավելի են կարևորվում, քանի որ մերօրյա բազում հակամարտությունների սրության պայմաններում տեղեկատվության առավել արագ ու արդյունավետ տարածման համարի հայտ եկած նոր տեխնոլոգիաները՝ մասնավորապես համացանցը, մեծաթիվ լսարանին այս կամ այն խնդրի վերաբերյալ կարծիք կազմելու հնարավորություն են տալիս:

Մինչև վերջերս մեզանում առավել հրատապ էին համացանցում տեղեկատվական քարոզչությանն առնչվող լրատվական, քաղաքագիտական բովանդակություն կրող ռեսուրսները: Սակայն մեր հարևաններից առնվազն երկուսը՝ Ադրբեջանը և Թուրքիան, այդ ռեսուրսների զարգացմանը զուգընթաց զարկ են տալիս կեղծարարության մեկ այլ ուղղության՝ պատմամշակութային առկա հարցերը խեղաթյուրող համացանցային ռեսուրսների ձևավորմանն ու զարգացմանը: Ի տարբերություն համացանցում առկա լրատվական, քաղաքագիտական բովանդակություն ունեցող հակահայկական նյութերի, պատմամշակութային հակահայ նյութերը ուսումնասիրման և հակազդման տեսանկյունից առավել մեծ ջանքեր են պահանջում, միաժամանակ դրանք նաև առավել արդյունավետ են համապատասխան լսարանների համար անհրաժեշտ համոզմունքներ ձևավորելու, լրատվական ու քաղաքագիտական վերլուծությունների համար հիմնարար հենքեր ստեղծելու տեսանկյունից: Մյուս կողմից էլ, հակազդմանը զուգընթաց, այսօր հայագիտության ոլորտում մինչ այժմ ստեղծված աշխատությունների էլեկտրոնային տարբերակները համացանցում ներկայացնելու մեծ անհրաժեշտություն կա, մի բան, որը հիմնականում լուծում է հակահայ կեղծ գիտական քարոզչության խնդիրները:

Կարծում ենք, որ այս առումով չափազանց կարևոր էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ 2010թ. հոկտեմբերի 16-ին Գործիսում ափյուրքահայ լրագրողների հետ հանդիպման ժամանակ խնդրի մասին հնչեց-

րած տեսակետը, որը յուրահատուկ ազդակ էր հայ հետազոտողներին այդ քարոզչության դեմ առավել ակտիվորեն հանդես գալու համար:

2. Քննարկվող խնդիրներ.

Ըստ արժարժված խնդիրների՝ զեկույցում փորձելու ենք քննության առնել երկու հիմնական խնդիր: Այն է՝ համացանցում հայագիտության աշխատությունների ներկայացման և հակահայկական կեղծ գիտական քարոզչության հարցերը:

Համացանցում հայագիտության արժեքավոր աշխատությունների ներկայացման խնդիրների տեսանկյունից վեր ենք հանելու այն հիմնական կառույցները, կազմակերպություններն ու նրանց կայքերը, որոնք այս ասպարեզում ինչ որ աշխատանք են կատարում: Դիտարկելու ենք այդ կայքերում նյութերի ներկայացման մեթոդներն ու քայլերը, անդրադառնալու ենք ոչ միայն դրական կողմերին, այլև հնարավոր բացթողումներին:

Հակահայկական կեղծ գիտական քարոզչության հարցերի տեսանկյունից էլ կներկայացնենք ադրբեջանական և թուրքական կողմերի այն հիմնական կայքերը, որոնք հիշյալ քարոզչությունն են իրականացնում: Քննության կառնենք այդ կայքերի բովանդակային, մեթոդաբանական խնդիրները, կհամեմատենք այդ և հայկական համապատասխան կայքերը:

ԱՆԻԿ ՂԱՐԻԲԱՍ
պատմական գիտությունների թեկնածու, ԵՊ

ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԲԱՐՈՋՉՈՒԹՅԱՆ ԿԵՐՉ
«ՊԱՏՄԱԿԱՆ» ՀԻՄՔԵՐԸ

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանն առնչված տեղեկատվական պատերազմի վերջին զարգացումները վկայում են, որ ադրբեջանական պատմաբանները, հասարակական-քաղաքական գործիչները, ՋԼՄ-ները հաճախ ոչ միայն կեղծում են արդի իրադարձությունները, այլև իրենց կեղծարարությունը հասցնում են պատմության որոշ շրջափուլեր: Կեղծում են պատմական ու քաղաքական շատ դեպքեր դրանք ներկայացնելով ադրբեջանական կոմյունիստության շղարշով Այնուամենայնիվ, այս ամենի հետ առկա են ադրբեջանական պաշտոնական տեղեկատվական, պատմագիտական ու քաղաքական բնութի շատ փաստաթղթեր ու հրատարակություններ, որոնք էլ վկայում են պատմական իրականությունը:

Այդպիսի մի հրատարակություն էլ 1920թ. Բաքվում թուրքերեն և օսերեն հրատարակված Ադրբեջանի Հանրապետության 1920թ. տվյալների օրացույցն է²:

Պաշտոնական բնույթ ունեցող այս հրատարակության մեջ փորձ է արվել ներկայացնելու Ադրբեջանի Հանրապետության տարբեր ոլորտները՝ տնտեսական, քաղաքական (ձևավորման պատմություն), օրենսդրական համակարգերը, ինչպես նաև կառավարական հաստատությունների անձնակազմն ու գործունեությունը (ներառյալ հասարակական ու կրթամշակութային կառույցները):

Հատկանշական է, որ ադրբեջանական քաղաքացիությունը որդեգրել է Բաքվում և Բաքվի, Ելիզավետպոլի հայկական ու հայաշատ երկրամասերում և քաղաքներում հայ քաղաքակրթական հետքի նկատմամբ ժխտողական ու յուրացման քաղաքականություն, սակայն հենց այս

պաշտոնական հրատարակությունը վերոնշյալ տարածքներում հայերի ունեցած քաղաքակրթական հետքի յուրօրինակ վկայություն է:

Այսպես, հրատարակության հենց սկզբում, ըստ օրացուցային պլանի, նշված են բոլոր հայկական տոները. «Հայկական Գրիգորյան» վերտառությամբ 1920թ. համարում, իսկ գրքի առաջին «Ադրբեջանի հանրապետության տարածքը և բնակչությունը» մասում առկա են մի շարք հակասություններ և կեղծիքներ:

Նախ ադրբեջանացիների հավակնությունները գերազանցում են երևակայության բոլոր չափերը՝ տարածքային հավակնությունների տեսանկյունից: Ադրբեջանի տարածքային սահմաններում են ներառված ոչ միայն նախկին Ելիզավետպոլի նահանգի հայկական տարածքները (Ճշտել, թե որոնք էին Ելիզավետպոլի մեջ), Ղարաբաղը, Ջանգեզուրը, Երևանի նահանգի մի շարք հայկական տարածքներ. իբր Ադրբեջանի մաս են կազմում Նախիջևանը, Շարուր-Ղարալագյազի գավառը, Նոր Բայազետի մի մասը, Երևանի նահանգի Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի գավառների մեծ մասը, իսկ որոշ մասն էլ համարվում էր վիճելի. Ադրբեջանի կազմում էին ներառված Սևանա լճի ամբողջ արևելյան հատվածը, Դիլիջանը և այլն:

Հայկական էին համարվում միայն Երևանը՝ իր շրջակայքով, Ալեքսանդրապոլի գավառը, Կարսի մարզը: Ադրբեջանի պաշտպանության նախարարության կազմած համապատասխան քարտեզից երևում է (աշխատություն վերջում՝ առդիր), որ ադրբեջանացիները տարածքային հավակնություններ ունեին նաև Վրաստանի նկատմամբ. Թիֆլիսի նահանգի մեծ մասը՝ մինչև Թիֆլիսի մատույցներ, համարվում էր վիճելի:

Բնակչության տվյալների ամփոփման աղյուսակում առկա են հայ բնակչության տվյալների վերաբերյալ հետաքրքրական ամփոփումներ:

² Адресь-Календарь Азербайджанской Республики на 1920-й г., на тюркскомъ и русскомъ языках, Баку, 1920.

ԿԵՂԾԻՔԻ ԵՎ ՈՏԵԶԳՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀՈՒՄԱՐԶԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Հոդվածում կոնկրետ փաստերով ներկայացվում են հայկական աշխարհագրական տեղանունների և մշակութային հուշարձանների պատմության խեղաթյուրման օրինակներ:

Հոդվածում առանցքայինը՝ տեղանունը նույնպես հուշարձան է հարցն է. այն առավել խոցելի է, դրա կորուստն օտարի առջև ճանապարհ է բացում առանց լուրջ ջանքերի յուրացնելու ազգային մնայուն արժեքները՝ կենցաղը, սովորույթները, մշակույթի տարրերը, հնարավորություն է ընձեռում աղավաղելով սեփականացնելու պատմությունը և ի վերջո տիրանալու տարածքին: Զբոսաշրջության զարգացումը նպաստում է այս երևույթի արագացմանը:

Առաջարկվում է հանրությանը ներկայացնել պատմական անվանումների, տեղանունների ճշգրիտ մեկնաբանությունը, իսկ Հայաստանի Հանրապետությունում շատ տեղանուններ հնարավորինս արագ վերանայել:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՈՐԿՈՎԿԱՍԻ ԲՆԻԿ ԺՈՂՎՈՒՐՆԵՐԻ ԴԵՍ
ՈՒՂՂԱՄԸ ԱՂՐԲԵԶԱՆԻ ՈՒՇԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՄԸ

1918թ. թուրքական սվիմների անմիջական միջամտությամբ ստեղծված և հիմնականում Արևելյան Այսրկովկասի մահմեդականներին այս տարածքների համար արհեստական բնույթ կրող Ադրբեջանի ժողովրդական Հանրապետություն (Azərbaycan Xalq Cəmhuriyyəti) անվան տակ ոչ պակաս արհեստականորեն միավորած պետական կազմավորումը ի սկզբանե ձևավորվել էր մի այնպիսի գաղափարական հենքի վրա, որի առանցքն էր կազմում, թյուրքականացում (tərkiləşmə), մահմեդականացում (islamlaşmaq), արդիականացում «müasirləşmə» կարգախոսը: Ակնհայտ է, որ նշված կարգախոսի առաջին բաղադրիչն էր, որ գաղափարախոսական տեսանկյունից արդեն իսկ կանխորոշում էր տարածքի ոչ թյուրքական էթնիկական միավորների հանդեպ նորաստեղծ պետության ծրագրած թյուրքացման քաղաքականության առաջնայնությունը: Չնայած սրան, այս պետական գոյացության չկայացվածությունը և համեմատաբար կարճ կյանքն այդպես էլ հնարավորություն չընձեռեցին, լրջորեն ձեռնամուխ լինելու նշված քաղաքականության հաջող իրականացմանը:

Արևելյան Այսրկովկասի տեղաբնիկ մահմեդական ժողովուրդների՝ թաթերի, թալիշների, լեզգիների, ավարցիների և այլոց ուծացման գործընթացը մեծ թափ ստացավ Ադրբեջանական ԽՍՀ ստեղծումով և հատկապես 1930-ականներից իրականում նաև ԽՍՀՄ ղեկավարության խրախուսված, այսպես կոչված, «ազգությունների խոշորացման» քաղաքականության շրջանակներում: Նաև հենց սրա արդյունքում էր, որ ԱԽՍՀ-ում ի վերջո հաստատվեց տիտղոսային հռչակված ադրբեջանցիների (ադրբեջանական թյուրքերի) էթնիկական խմբի լիակատար էթնոկրատիական գերիշխանություն, որը հստակորեն շարունակվում է մինչև օրս և մասնավորապես արտահայտվում նշված խմբի կողմից պետության ներսում քաղաքական իշխանության համատարած վերահսկողությամբ, տեղաբնիկ էթնիկական հանրությունների տարրական իրավունքների կոպիտ ոտնահարմամբ և սահմանափակմամբ,

նրանց մշակույթի անտեսմամբ կամ յուրացմամբ, ինչպես նաև վերջիններիս հանդեպ ծուլման քաղաքականությունը բացահայտորեն կամ քողարկված կերպով կյանքի կոչելով:

Ձեկուցման շրջանակներում անդրադարձ կկատարվի վերոնշյալ հիմնահարցերին՝ թե՛ պատմական կտրվածքով և թե՛ Ադրբեջանի Հանրապետության ներսում ներկայումս իրականացվող ուժացման քաղաքականության հիմնական ուղղությունների վերլուծության տեսանկյունից:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԴԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ «ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ»

Էթնիկ հակամարտությունների հանրային քննարկումներն արդի փուլում ձեռք են բերել դրսևորման նոր ձևեր ու եղանակներ, կապված առաջին հերթին հեռահաղորդակցության միջոցների ու տեղեկատվության աղբյուրների աննախադեպ բազմազանության հետ:

1. Վիրտուալ տարածությունը, որն այսօր ոչ միայն սիրողական, այլ պրոֆեսիոնալ, հաճախ նաև բարձր պատրաստվածություն ունեցող մասնագիտական քննարկումների հարթակ է, հանդես է գալիս որպես կարծիք ու տրամադրություններ ձևավորող միջավայր, որն հասու է ոչ միայն հակամարտության կողմերի, այլև վիրտուալ տարածքի բոլոր դերակատարների համար:

2. Էլեկտրոնային տարբեր կայքերի, էլեկտրոնային լրատվամիջոցների նույնիսկ նախնական դիտարկումը թույլ է տալիս արձանագրել, որ տեղեկատվական պատերազմում այսօր ավելի ու ավելի ակտիվորեն է օգտագործվում ազգագրական, բանահյուսական, պատմագիտական նյութը՝ ծառայեցվելով ոչ միայն սեփական արդարացիության հիմնավորմանը, այլ այդ ճշմարտությունը նաև միջազգային լսարանին հասու դարձնելուն: Վիրտուալ տարածությունը նաև պատմական իրողությունների ու իրադարձությունների ձևափոխման, հաճախ նաև՝ նենգափոխման միջավայր է, քանի որ ի տարբերություն ակադեմիական միջավայրի, վիրտուալ տարածությունում պատասխանատու լինելու խնդիրը չի դրվում:

3. Տարբեր բլոգների, սոցիալական ցանցերի դիտարկումը թույլ է տալիս արձանագրել, որ այսօր վիրտուալ տարածքում տեղեկատվական պատերազմները աչքի են ընկնում բովանդակային բազմազանությամբ և ունեն տարբեր ուղղություններ. պայքար ազգային ուտեստի, ազգային սիմվոլների, պատմական տարածքի, իրական կամ թվացյալ մշակութային ժառանգության համար ու դեմ:

4. Տեղեկատվական պատերազմները, ի տարբերություն նախորդ տարիների, երբ ինտերնետը նոր էր դառնում վիրտուալ իրականու-

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺՆՏՄԱՆ ՈՒ ՆԵՆԳԱՓՈՒՄԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ» ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱՂՈՒՉՆԵՐԸ

թյուն ձևավորող միջավայր, նաև ուղղորդվում են պետական տարբեր կառույցների կամ պետության վերահսկողության տակ գտնվող հաստատությունների կողմից: Պետական պատվերի առկայությունը, իր հերթին, ավելի է կարևորում գիտական, ակադեմիական հաստատությունների դերը:

5. Հայաստանյան միջավայրում վերաբերմունքը ինտերնետային կայքէջերի հանդեպ, դրանցով տեղեկատվության տարածման հնարավորությունները համեմատաբար նոր երևույթ են, հաճախ ունեն ընդամենն անհատական ու խմբային նախաձեռնությունների բնույթ, երբեմն զարգանում են «նրանք ատում են, մենք պատասխանում» տրամաբանության շրջանակներում, ինչը շատ դեպքերում սահմանափակում է օբյեկտիվ ու համակողմանի տեղեկատվության տարածման հնարավորությունները: Հայալեզու ու այլ լեզուներով գործող կայքէջերում սահմանափակ է նաև ազգագրական, բանագիտական ու պատմագիտական ամփոփ ու ընդգրկուն տեղեկատվությունն այն դեպքում, երբ աղբյուրաբանական որոշ էջեր հաճախ «զարմացնում են» աղբյուրների բազմազանությամբ, որոնք, բազմաթիվ դեպքերում կամ հեռու են իրականությունից, կամ մեկնաբանվում են այնպես, ինչպես դա ձեռնտու է աղբյուրաբանական կողմին:

6. Ստեղծված իրավիճակում, առկա խնդիրները հաղթահարելու համար, կարևոր նշանակություն ունի նպատակային ու ուղղորդված քաղաքականության իրագործումը, որը հնարավորություն կտա վիրտուալ աշխարհի հիմնական, այդ թվում և այլալեզու դերակատարների համար մատչելի դարձնել օբյեկտիվ, համակողմանի ու գիտականորեն հիմնավորված տեղեկատվությունը:

Անցած տասնամյակների ընթացքում թուրքական պատմագրությունը հետևողականորեն ու նպատակային ձևով խեղաթյուրում է XX դարասկզբի թուրքիայի պատմությունը՝ նպատակ ունենալով նենգափոխելու արևմտահայության նկատմամբ իր իրականացրած ցեղասպանության քաղաքականությունը: Հատկանշական է այն հանգամանքը, որ Առաջին աշխարհամարտի և Օսմանյան կայսրության մայրամուտի պատմության այդ էջերի նենգափոխումը թուրքական պատմագրությունը կատարում է պետական բարձր մակարդակով:

Թուրքական պատմագրությանը պետական առաջադրանք է տրվել հիմնավորել՝ Հայոց ցեղասպանության պնդումների անհիմն լինելը: Թուրքիայում պարբերաբար հրատարակվում են Հայոց ցեղասպանությունը ժխտող «աշխատություններ», որոնք լայնորեն տարածվում են տարբեր երկրներում, այդ թվում՝ այդ երկրներում հավատարմագրված թուրքական դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով: Թուրքական պետական ու պաշտոնական կայքէջերում հաճախ կարելի է հանդիպել Հայոց ցեղասպանությունը ժխտող «նյութերի»:

Իրական պատմական փաստերը ներկայացնող աշխատանքների բացակայության պայմաններում թուրքական կեղծ պատմական նյութերին ծանոթացողների շրջանում ստեղծվում է համապատասխան, հիմնականում ոչ հայանպաստ, կարծիք, ինչը, անշուշտ, որոշակիորեն անդրադառնում է նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացին:

Պետական առաջադրանքին համապատասխան՝ թուրքական պաշտոնական պատմագրությունն անգամ հորինել է Հայոց ցեղասպանությունը ժխտող որոշ կեղծ գիտական տեսություններ, որոնց միջոցով փորձում է առաջին հայացքից «տրամաբանական» ու «արժանահավատ» բացատրություն տալ արևմտահայերի նկատմամբ Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրության իրականացրած բնաջնջման քաղաքականությանը: Այդ «տեսությունների» համա-

**ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՐԱՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԻ ԹՈՒՐԻԱՅՈՒՄ**

ձայն՝ արևմտահայերը ներկայացվում են իբրև վստահություն չնեղ շնչող, դավաճան մի տարր, որի նկատմամբ էլ պատերազմական պայմաններում իրականացվել են պետական պատժամիջոցներ: Հայր ցեղասպանությունը ներկայացվում է ընդամենը որպես ժամանակակի տեղահանություն, իսկ զանգվածային կոտորածները՝ քրիստոնյաների ու մահմեդականների միջև տեղայնական, միջհամայնքային բախումներ:

Ցեղասպանության ժխտմանը նպատակաուղղված թուրքական պատմագրության գործելաոճը պարզ է՝ ժխտելով Հայոց ցեղասպանությունը, ձգտել թուրքական պետությանը զերծ պահելու մարդկության դեմ ուղղված հանցագործության համար պատասխանատվությունից: Սակայն այս գործելաոճը իրական պատմական անցքերին անտեղյակ օտարերկրացիների շրջանում որոշակիորեն ամրապնդում է տվյալ հիմնահարցի վերաբերյալ թուրքական վարկածին վստահելու և տուրք տալու վտանգավոր միտումը, ինչը հետագայում չափազանց դժվար կլինի արմատախիլ անել: Ուստի, ժամանակակից հայ պատմագրության առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է համարել թե՛ տպագիր թե՛ էլեկտրոնային նյութերով միջազգային հանրությանը պատմական ճշմարտությանը ծանոթացնելը և Հայոց ցեղասպանությունը ժխտող ու նենգափոխող թուրքական պատմագրության «տեսություններին» պատշաճ գիտական պատասխան տալը:

Հայերի ցեղասպանության վերաբերյալ հանրապետական թուրքիայի բոլոր կառավարությունները վարել են ուրացման քաղաքականություն: Ավելին, 2000թ.-ից սկսած թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ) Հայոց ցեղասպանությանն առնչված խնդիրը համարեց թուրքիայի ազգային անվտանգությանն առնչվող խնդիր: Բացի այդ, Արտաքին գործերի նախարարությանը հանձնարարվեց ստեղծել հատուկ հանձնաժողով՝ «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ» պայքարելու նպատակով:

Միաժամանակ վերջին տասնամյակում Հայկական հարցը թուրքիայում աստիճանաբար դառնում է հասարակական բաց քննարկման առարկա, ինչը պայմանավորված է ԵՄ ճնշումների ներքո երկրում իրականացվող ժողովրդավարացմանը նպատակաուղղված որոշ բարեփոխումների ընձեռած հնարավորություններով: «Հայկական տարու»-ի նահանջին նպաստող առաջնային գործոնները՝ եվրահիստեզրման գործընթացը, հասարակական-քաղաքական, մտավորական շրջանակներից առաջադրվող ժողովրդավարացման պահանջները, ազգային թեմաներում հարուցված պետական արգելքների աստիճանական հետքայլերը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման արշավը, ինչպես նաև 2008թ.-ին սկսված հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը նպատակաուղղված նախաձեռնությունները, ստիպում են թուրքիայի իշխող Արդարություն և զարգացում կուսակցությանը (ԱԶԿ) վերանայել Հայերի ցեղասպանությանը վերաբերող որոշ տեսակետներ:

Ներկայիս թուրքական կառավարության տեսակետները վերոհիշյալ հարցում արտահայտվել են ԱԳՆ-ի պատրաստած «Հայկական զեկույցում», որը կրում է «1915-ի իրադարձությունները» վերնագիրը:

Զփոխելով ցեղասպանության ժխտման ռազմավարությունը՝ թուրքիան փորձում է կիրառել նոր մարտավարություն, աղավաղելով հարցի իմաստն ու բովանդակությունը և անտեսելով ցեղասպանության հետևանքները: Մասնավորապես՝

- ցեղասպանությունը ներկայացնելով որպես պատերազմի ընթացքում տեղի ունեցած «ողբերգական իրադարձություններ», որոնք իր հավասարապես «տառապանքներ են բերել հայ և թուրք ժողովուրդներին», փորձ է արվում կշեռքի նույն նժարին դնել հայերի ցեղասպանությունը և պատերազմող թուրք ժողովրդի կրած գրկանքները,

- հիշատակելով, որ Թուրքիան լուծել է «օսմանյան պարտքի խնդիրը, փորձ է արվում հրաժարվել հայերի պահանջատիրությունից, այն է՝ ցեղասպանության հետևանքով առաջացած նյութական վճարի փոխհատուցումից,

- նշելով, որ «ողբերգությունը» տեղի ունեցավ «դրսի ուժերի» միջամտությամբ, որոնց դրոմանն արձագանքեցին «մեր որոշ քաղաքացիներ» (Օսմանյան կայսրության հայերը- Ա.Հ.), փորձ է արվում թուրքական պետությանը զերծ պահել որևէ պատասխանատվություն կրելուց,

- պնդելով, թե այդ հարցով պետք է զբաղվեն երկու երկրների պատմաբանները և որ Թուրքիան պատրաստ է ընդունելու «պատմաբանների հանձնաժողովի» ամեն մի եզրահանգում՝ փորձ է արվում կանխելու միջազգային ատյաններում Հայերի ցեղասպանության վերաբերյալ բանաձևերի քննարկումն ու ընդունումը:

Այսպիսով, Թուրքիայի որդեգրած այս նոր մարտավարությունը կարելի է բնորոշել որպես «սողացող» մեթոդականություն, որը բացահայտ ուրացումից առավել վտանգավոր է, քանզի առերևույթ կարող է «օբյեկտիվ» գնահատականներին հասնելու նպատակադրվածության պատրանք ստեղծել:

ԳԵՂԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ
ՆՆԵՆԱԳՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՄԵՐԿԱՑՈՒՄԸ XX դարի ՍԿԶԲԻ
ՀՆԶԱԿՅԱՆ ՄԱՍՈՒՈՒՄ

XIX դարի վերջին նոր թափ ստացավ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, որի նպատակը թուրքական դարավոր բռնակալությունից ազատագրումն էր: Այդ շարժումները ճնշելու նպատակով սուլթանական կառավարությունը կիրառում էր ոչ միայն ուժային մեթոդներ, այլև քարոզչությունը: Լայնորեն տարածվում էր այն կեղծիքը, թե հայ ժողովուրդը գոհ է սուլթանից և հակակառավարական տրամադրությունները հրահրում են դրսից ներթափանցած խռովարարները:

1908թ. սուլթանական վարչակարգի տապալումից հետո իշխանության հասած երիտթուրքերը թեև հռչակեցին «ազատություն», «հավասարություն» և «արդարություն» կարգախոսները, սակայն Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների կյանքում իրական տեղաշարժեր չկատարեցին, ընդհակառակը՝ ազգային հարցում շարունակեցին սուլթան Համիդի հետադիմական քաղաքականությունը: Օսմանյան կայսրությունում լայնորեն տարածված՝ հայերին պատկանող հողերի զավթումների, նրանց նկատմամբ կիրառվող ազգային ու կրոնական հալածանքների շարունակվող քաղաքականությունը թուրքական իշխանությունները փորձում էին արդարացնել մտացածին ու հնարովի պատճառաբանություններով: Վերոհիշյալ խնդիրների անտեսումը, ժխտումը կամ փաստերի կեղծումը դարձել էր կառավարության հիմնական գործելակերպը: Դրա վառ ապացույցը 1909 թ. Կիլիկիայի հայության կոտորածն էր ու դրան հետևող պետական պաշտոնյաների մեկը մյուսին հակասող կեղծ պատճառաբանությունները: Միաժամանակ թուրքական պաշտոնական քարոզչությունը հանրությանն ապակողմնորոշելու նպատակով մամուլում նյութեր էր հրապարակում հպատակ ժողովուրդների նկատմամբ օսմանյան պետության բարեգութ վերաբերմունքի մասին, փորձում ապացուցել, թե դարերով թուրքերը բարի կամք ու ցանկություն են դրսևորել, որպեսզի նվաճված ժողո-

վորդները պահպանեն իրենց լեզուն և ազգային առանձնահատկությունները:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ եվրպական տերություններն ակտիվացրին հայկական բարենորոգումների ծրագրի քննարկումները, երիտթուրքական կառավարությունը սաստկաբեց հակահայկական քարոզչությունը: Այդ շրջանում թուրքական մամուլը և պաշտոնյաները տարածում էին այն կեղծիքը, թե Հայկական հարց չկա և բարենորոգումները վերաբերում են Օսմանյան կայսրության բոլոր նահանգներին: Կառավարության պաշտոնական «Թանհիթերթն իր հրապարակումներում նույնիսկ ժխտում էր հայ ժողովրդության փաստը՝ հայտարարելով, թե օսմանյան կայսրությունում կմիայն մեկ ազգ՝ օսմանցի ազգը: Հայ ազգային հնչակյան կուսակցությունն իր մամուլում («Հնչակ», «Կոհակ») ժամանակին արծարծել է այդ հարցերը, բացահայտել դրանց միտումնավորությունը, սնանկությունը և կեղծ ու հակահայկական բնույթը:

ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՄԱՆՑ ՊԻՏԱՄԵՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԱՆՆԵՐՈՒԹՅԱՆ ԱՂԻՔԵԶԱՆԱԿԱՆ ՆԵՆԳԱԹՈՒՆՈՒՄԸ

1950-ական թվականներից սկսած ադրբեջանական պատմագրությունը շրջանառության է դրել և պատմական իրականության նենգափոխման նշանողի հետևողական բարձրացմամբ համառորեն զարգացնում է սերտորեն փոխկապակցված երկու հայագիտական թեզեր: Դրանք են. ա) Աղվանքն ընդգրկել է նաև Ուտիք և Արցախ նահանգները, բ) ադրբեջանցիներն աղվանների ուղղակի հետնորդներն ու ժառանգորդներն են:

Այս կեղծարարությամբ Մեծ Հայքի ի բնե հայկական ու հայաբնակ այդ նահանգներում ծնված միջնադարյան հայ գիտամշակութային բոլոր գործիչները հայտարարվել են աղվան, այսինքն՝ ադրբեջանցի: Դրանից բխում է, որ աղվանական (ադրբեջանական) է դիտարկվում ու յուրացվում նաև նրանց թողած հարուստ ու մեծարժեք գիտամշակութային ժառանգությունը:

Իրականում բուն Աղվանքն ընդգրկել է միայն Կուրի ձախափնյակը, մինչդեռ Ուտիքն ու Արցախը եղել են այդ գետի աջափնյակում և կոչվել են Հայոց արևելից կողմանք: V դարում Սասանյաններն այդ նահանգները միացրին Աղվանից մարզպանությանը, այսինքն՝ բուն Աղվանքին: Դրանից հետո այդ նահանգների զբաղեցրած տարածքն այն բուն Աղվանքից տարբերակելու համար սկսեց աշխարհագրականորեն կոչվել Հայոց աղվանից կողմանք, կամ Հայոց Աղվանք, սակայն դա բնավ տեղի հայության աղվանացում չէր նշանակում:

Ի տարբերություն Հայոց արևելից կողմանց հայության, բուն Աղվանքը բնակեցնող աղվանները, հատկապես արաբական տիրապետության շրջանում, էթնիկ ու դավանական ծովման ենթարկվելով, պատմական ասպարեզից արագորեն հեռացան: Հետևաբար, նրանց և Մ. Կ. Կեսին մեր տարածաշրջան ներխուժած թուրք-օղուզների՝ այժմյան ադրբեջանական թուրքերի իսկական նախնիների միջև որևէ գենետիկ կապ չկա: Ինչ վերաբերում է Ուտիք-Արցախում ծնված միջնադարյան հայ գիտամշակութային գործիչներին, ապա նրանք հայ էին ոչ միայն ազգությամբ, այլև իրենց մայր ժողովրդի ազգային շահերին ծառայող գործունեությամբ ու վաստակով:

ՈՌԻՔԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՊԻ

1914-1916 թթ. ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ
ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ ԹՈՒՐԶ ԵՎ ԱՐԻՔԵԶԱՆՏԻ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1980-ական թվականներից և հատկապես հետագա տասնամյակներին թուրք պատմաբաններն ու քաղաքագետները զգալի ջանքեր են գործադրում, որպեսզի խեղաթյուրեն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ կամավորական շարժման և արևմտահայ ինքնապաշտպանական կոիվների պատմությունը: Թուրք պատմաբանները հրատարակում են զգալի թվով հոդվածներ, գրքեր, փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ:

Սկսած 1990-ական թվականներից թուրք պատմաբաններին և քաղաքագետներին «օգնության» են հասնում նրանց ադրբեջանցի գործընկերները, որոնք սկսեցին մեծ ուշադրություն դարձնել 1914-1916թթ. իրադարձություններին: Անհրաժեշտ է նշել, որ ադրբեջանցի պատմաբանների «հետազոտությունները» գլխավորապես հիմնված են թուրքական փաստաթղթերի և հորինվածքների վրա:

Թուրք-ադրբեջանական պատմագրությունը հիմնականում հիմնվում է միասնական պատմական հայեցակարգի վրա, որը հիմքում երիտթուրքական պարագլուխներ Թալեաթ և Ջեմալ փաշաների կանխակալ հուշերն ու վստահություն չնեղընչող վիճակագրական տվյալներն են:

Թուրք և ադրբեջանցի պատմաբանները մշակել են միասնական տեսություն, որի նպատակն է՝ ապացուցել, որ պատերազմի տարիներին հայ կամավորներն իրականացրել են մահմեդական քաղաքացիական բնակչության զանգվածային կոտորածներ, իսկ թուրքահպատակ հայերն Անտանտի տերություններից ստանալով համապատասխան հրահանգներ և գործելով միասնական ծրագրով՝ նպատակ են ունեցել հարձակվելու թիկունքի հիմնարկությունների, հաղորդակցության ուղիների վրա, խռովություն բարձրացնելու և այլն: Սակայն վկայակոչված բոլոր պնդումները չեն համապատասխանում իրականությանը և չունեն որևէ լուրջ փաստաթղթային հիմնավորում: Վկայակոչ-

ված փաստաթղթերը և դեպքերն ամբողջությամբ կեղծված են և նպատակ ունեն արդարացնելու թուրքական իշխանությունների՝ հայերին բռնագաղթի ենթարկելու որոշումը՝ որպես ռազմական անհրաժեշտություն:

Թուրք և ադրբեջանցի պատմաբաններին օգնության է եկել Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբը, որի կայքէջում տեղակայված են գրքեր, որոնք «բացահայտում են» հայ կամավորների և արևմտահայերի հանցագործությունները:

Անհրաժեշտ ենք համարում փաստել, որ թուրք և ադրբեջանցի պատմաբանները չեն «նկատում», որ Գերմանիայի, ԱՄՆ-ի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և այլ երկրների արխիվներում պահպանվել են արժանահավատ փաստաթղթեր, որոնք վկայում են, որ Կովկասյան բանակի կազմում հայ կամավորները մարտնչել են թուրքական կանոնավոր բանակի և անկանոն քրդական կազմավորումների դեմ և չեն դիմել քաղաքացիական բնակչության զանգվածային ջարդերի: Այդ նույն աղբյուրները հաստատում են, որ 1915թ. արևմտահայերն ապստամբություններ չեն բարձրացրել, այլ զենքը ձեռքին պաշտպանել են իրենց ընտանիքները և իրենց կյանքը թուրքական կանոնավոր բանակի ու քրդական զինված ջոկատների հարձակումներից:

Կարելի է համոզվածությամբ փաստել, որ չնայած ծախսված դրամական միջոցներին, ո՛չ թուրք և ո՛չ էլ ադրբեջանցի պատմաբաններին չի հաջողվել մոլորեցնել համաշխարհային հասարակայնությանը:

**ԹԱՍԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ**

**ՍԱՐԱՂԱ. 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐԶԻ ԳՈՂԳՈԹԱ (ԱՎԱՆԱՏԵՍՆԵՐԻ
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ 1992Թ. ԱՊՐԻԼԻ 10)**

Լեռնային Ղարաբաղի հայության նկատմամբ էթնիկական ճնշումների ու ազգագրական փոփոխությունների անթաքույց քաղաքականությունը հանգեցրեց 1988թ. փետրվարի 28-ին Սունգայիթում սանձազերծված հայերի սպանդին, որը շարունակվեց Բաքվում, Կիրովաբադում, Մինգեչաուրում, Շահումյանի շրջանում: Այդ արյունոտ շղթան ձգվեց ամբողջ երկրով մեկ, որի օղակներից մեկն էլ Մարաղան էր:

1995թ. ընթացքում Վանքում, Ստեփանակերտում և Նոր Մարաղայում մեր գրառած՝ Մարաղայի կոտորածի մասին ականատեսների, տուժածների ու պատանդվածների ցնցող վկայությունները պատմական կարևորագույն վավերագրեր են, վկայություն, ցուցմունք՝ Մարաղայի խաղաղ հայ բնակչության նկատմամբ Ադրբեջանի զինված ստորաբաժանումների իրագործած ցեղասպանության իմաստով:

Ադրբեջանի քաղաքական վերնախավը հետևողականորեն իրագործում է ապատեղեկատվական ռազմավարություն: Պետական քարոզչական մեքենան, իր քաղաքացիների զանգվածային գիտակցությունը պղտորելով հայերի՝ այսպես կոչված «ադրբեջանցիներին ցեղասպանելու մասին» առասպելներով, խեղաթյուրում է ճշմարտությունը: Վանդալիզմի, ցեղասպանության մեղքը բարդելով տուժող կողմի վրա՝ Ադրբեջանն աշխարհին ներկայանում է զոհի կեցվածքով:

Մի դեպքում Ադրբեջանը շանտաժի է ենթարկում Հայաստանին և կոնֆլիկտի կարգավորմանը ներգրավված երկրներին, մյուս դեպքում՝ տեղեկատվական-հաղորդակցական տարածությունն ու ռեսուրսները ծառայեցնում է միջազգային հանրությանը մոլորեցնելու համար: Մեր զեկուցման նպատակն է Մարաղայի օրինակով ցույց տալ, որ Ադրբեջանի ապատեղեկատվական մարտավարությունը հղի է անկանխատեսելի վտանգներով ոչ միայն Ղարաբաղյան հիմնախնդրում հակամարտող կողմերի համար, այլև տարածաշրջանում աշխարհաքաղաքական բարդ խնդիրների հանգուցալուծման առումով:

Չնայած միջազգային բազմաթիվ կոնվենցիաներով ու պայմանագրերով մարդու իրավունքների խախտումների համար ամրագրված պատասխանատվությանը՝ նորօրյա հակահայկական կոտորածները ցայսօր չեն ստացել թե՛ տարածաշրջանի հիմնախնդիրներով զբաղվող հանձնախմբերի և թե՛ համաշխարհային հանրության քաղաքական գնահատականը:

ԱՐՑԱԿԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈՒՆՈՒՄԸ
ԱՂՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Արցախի մելիքությունների պատմությունը հայոց պատմության կարևորագույն օղակներից է: Հայոց անկախ պետականության բացակայության պայմաններում Արցախի մելիքությունները մնացել էին այն միակ ուժը, որոնց հենքի վրա հնարավորության դեպքում կարող էր վերականգնվել Հայոց պետությունը:

Գաղտնիք չէ, որ աղբբեջանական պատմագրությունը տարիներ շարունակ ջանք ու եռանդ չի խնայում Հայաստանի պատմությունն ու ամեն հայկականը խեղաթյուրելու և ծուռ հայելու մեջ ներկայացնելու համար:

Այդ առումով, աղբբեջանական պատմաշինարարության հիմնական թիրախներից մեկը, հասկանալի պատճառներով, հայոց Արցախն է՝ իր անցյալով ու ներկայով: Չկա Արցախի պատմության թեկուզ և մի շրջափուլ, որը հետևողականորեն կեղծած չլինեն աղբբեջանցի պատմաբանները: Նրանց զեղծարարության հիմնական թեմաներից է հատկապես Արցախում հայոց պետականության դրսևորումների՝ Խամսայի մելիքությունների պատմությունը: Այդ թեմայով Աղբբեջանում և նրանից դուրս հրապարակվում են «աշխատություններ», որոնցում, հակառակ առկա պատմագրական մեծաթիվ սկզբնաղբբյուրներին և պատմագիտական գրականությանը, Արցախի մելիքությունները ներկայացվում են որպես, այսպես կոչված, աղվանական կազմավորումներ: Այդ հակազիտական աշխատություններն աղբբեջանական քարոզչամեքենան թարգմանում է տարբեր լեզուներով և տարածում աշխարհով մեկ:

Սույն զեկուցման մեջ բազմաթիվ փաստերի վկայակոչմամբ մերկացվում են Արցախի մելիքությունների XVII–XIXդդ. պատմության վերաբերյալ աղբբեջանցի պատմաշինարարների կեղծիքները և պատմագրական սկզբնաղբբյուրների ու գիտական գրականության հիման վրա բացահայտվում է դրանց շինծու «տեսությունների» սնանկությունը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱԵՆԱՐԿԻ ԺԱՅՈՒՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ԺԱՌՆԳԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵՆՈՒԹՅԱՆ ՆԵՆԳԱՓՈՒՆՈՒՄԸ ԹՈՒՐԹ-
ԱՂՐԲԵԶԱՆԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

1. Հնագիտական հուշարձանները, մասնավորապես՝ ժայռապատկերները Հայկական լեռնաշխարհի (մոտ 400 հազար կմ²) և հայ ազգի VII-I հազ. պատմական իրականության բացահայտման կարևորագույն մշակութաբանական սկզբնաղբբյուր են: Ժայռապատկեր կերտողները էթնոմշակութային առումով միասնական էին, դրանց արարողները բազում հազարամյակներ նստակյաց են եղել, և Հայկական լեռնաշխարհը ժայռափորագրման օրրան է:

2. Արևելյան Հայաստանի բռնազավթված տարածքներից ժայռապատկերներով առատ է Նախիջևանը: Արևմտյան Հայաստանում ժայռապատկերային շատ հնավայրեր կան Վանանդում, Կաղզվանում, Իգդիրի մոտ, Արածանիի ակունքներում, Խնուսում, Վանի շրջակայքում, Կորդուքում, Հայոց Միջագետքում և այլ վայրերում: Հայկական լեռնաշխարհի բնիկ հայ ազգը, ստեղծողը, կրողն ու տերն է այդ ամբողջական մշակույթի:

3. Մշակութակործան եղեռնի ձևով թուրք ցեղասպան քաղաքականության շարունակման զոհը դարձավ հայկական ճարտարապետական, ձեռագրական, ազգագրական ժառանգության մեծ մասը: Հետեղեռնյան տարիներին աշխարհաքաղաքական ու կայսերապաշտական շահեր հետամտող հանրապետական թուրքիան և Աղբբեջանը որդեգրեցին ցեղասպանության փաստի ժխտման, հայոց տեղաբնակության և մշտագոյության նյութեղեն կրողների նպատակային վերացման պետական քաղաքականություն:

ԱՂՐԲԵՋԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ
ՈՒՂԴԱԾՈՒԹՅՈՒՆ

Ձեկույցում քննության է առնված Աղրբեջանի նավթային դիվանագիտության բնույթը, մասնավորապես, ինչպես է Աղրբեջանը, նավթային գործոնն օգտագործելով, փորձում մեկուսացնել ՀՀ-ին և ԼՂՀ-ին: Նավթային դիվանագիտության իմաստը Աղրբեջանի արտաքին գործերի նախկին նախարար Հասան Հասանովը 1990-ական թվականների կեսերին բացատրում էր հետևյալ կերպ. քանի որ Պարսից ծոցի պատերազմը վկայեց, որ միջազգային հանրությունը հետևողականորեն և վճռականորեն է գործում է ներգակիրներով հարուստ տարածաշրջաններում, հետևաբար Աղրբեջանի հարուստ պաշարների ու միջազգային տնտեսական կապերի պայմաններում դա կարող է նախազգուշացնող դեր կատարել Հարավային Կովկասում դրությունը ապակայունացնելու փորձ անողի համար: Այդ իսկ նպատակով Աղրբեջանի իշխանությունները միտումնավոր մի քանի անգամ ուռճացված են ներկայացնում իրենց երկրի նավթային պաշարները:

Արտասահմանում գործող աղրբեջանական դեսպանատները նույնպես լծված են հակահայկական քարոզչություն ծավալելու գործով: Աղրբեջանի իշխանությունները միջոցներ են տրամադրում աղրբեջանական սփյուռքի կազմակերպման համար՝ որպես հայկական սփյուռքի հակալիզի:

2007թ. մայիսին հաստատված Աղրբեջանի ազգային անվտանգության հայեցակարգը, որն իրականում հակահայկական քաղաքականության ծրագիր է, մեկ անգամ ևս ապացուցեց, թե որքան վտանգավոր է Աղրբեջանի ղեկավարության վարած քաղաքականությունը Հարավային Կովկասի կայունության համար:

ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աղրբեջանի պետական քարոզչամեքենայի իրականացրած հակահայկական արշավի շրջանակներում կարևոր տեղ ունեն իրական և երևակայելի աշխարհաքաղաքական, այդ թվում և տարածաշրջանային դասավորվածություններին առնչված տարբեր տեսակի կեղծարարությունները: Դրանց առանձնահատկությունն այն է, որ եթե աղրբեջանական հակահայկական քարոզչության այլ ուղղություններ, մասնավորապես ատելության սերմանումը, դարաբաղյան հիմնախնդրի ուժային լուծման կոչերը և այլն, նախատեսված են «ներքին օգտագործման», այսինքն գլխավորապես իրենց բնակչությանը մոլորեցնելու համար, ապա «աշխարհաքաղաքական» ուղղությունը հասցեագրված է արտաքին աշխարհին:

Տվյալ գեկույցի հեղինակի նպատակն է վերլուծել, թե վերջին տարիներին աշխարհում և տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումների ու փոփոխությունների ազդեցությամբ ինչպիսի կերպարանափոխություններ է ապրել աղրբեջանական քարոզչության նշված ուղղությունը:

